


Հ Բ Ա Տ Ա Ր Ա Կ Ո Ի Թ Ի Ի Ն «ԱՐՕՐ» Ա Մ Ս Ա Գ Ր Ի

ԼԵՒՈՆ ՄԱՆՈՒԵԼԵՆ

Մ Ա Գ Դ Ա

ԴՐԱՄԱ ՀԻՆԳ ԴՈՐԾՈՂՈՒԹԵԱՄԲ



Թ Ի Յ Լ Ի Ս

Տպարան «Էպոխա» Մուգէյսկի պեր. № 8.
1913

891.99
Մ-27

891.39
5-27

STOS HUI #

ԼԵՆԻՆ ՄԱՆՈՒԼԵՐՆ

Մ Ա Գ Դ Ա

ԴՐԱՄԱ 5 ԴՈՐՇՈՂՈՒԹԵԱՄԲ

(Արտատպուած «ԱՐՕՐ» ամսագրից)



ԹԻՖԼԻՍ

Էլիֆարաուրժ պարան «Էպոխա», Մուգէյսկի պեր. № 8
1913

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

Ջումուդ.— Կալուածատէր և հարուստ վաճառական:
Հեղինէ.— Նրա երկրորդ կինը, Մազդայի խորթ մայրը:
Մազդայ.— Ջումուդի աղջիկը, առաջին ամուսնուց:
Աօնա.— Մազդայի ժողովուրդը:
Ռուբէն.— Ջումուդի հարեանը:
Նիկո.— Ռուբէնի քոյրը:
Վանօ.— Երիտասարդ:
Բժիշկ.
Պետրոս.— Ջումուդի ծառան:

«Մազդան» առաջին անգամ ներկայացուած է 1908 թ. գեկտեմբերի 1-ին Բազում, Թաղիկի թատրոնում, մասնակցութեամբ տ. Սիրանոյշի:



4078-84

Մ Ա Գ Դ Ա

ԴՐԱՄԱ 5 ԴՈՐԾՈՂՈՒԹԵԱՄԲ

ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ ԱՌԱՋԻՆ

Ընդարձակ սենեակ Ջումուդի բնակարանում: Կահաւորութիւնը հարուստ և փարթամ: Դիմացի պատը մէջտեղի դնով և երկու պատուհաններով նայում է դէպի բակը, ուր բարձրանում են ծառեր, որոնց ետեից նշմարվում է նոյն բակում ապրող հարեանների կացարանը իր պատշգամբով: Աջակողմեան դուռը տանում է դէպի Ջումուդի սենեակները, ձախակողմեան դռնով սովորաբար ել ու մուտ է անում Մազդան:

Կահաւորութիւնը ներկայացնում է եւրօպական և ասիական կարագիների խառնուրդ: Այստեղ կայ և դիւան իր բազկաթոռներով և կլոր սեղանով, և ասիական տախտ իր բոլոր զարդարանքով, և լոմբի սեղան, և տրիւֆօ և ջահ և այլն:

Առաւօտ է: Ջումուդը խալաթով նստած է սեղանի մօտ en face. Փնջացնելով խմում է թէյի վերջին ումպերը և յետոյ սկսում է ինչ-որ հաշիւներ տեսնել համբիշի վրայ:

Աջ դռնից մտնում է Հեղինէն և, տեսնելով ամուսնուն խորատու զուրկ հաշիւների մէջ, կամացուկ մօտենում է ետեից և ձեռքերով ծածկում է նրա աչքերը:

— 0 —

Տ Ե Ս Ի Լ Ա.

Ջումուդ եւ Հեղինէ.

ՋՈՒՄԾ.— (Շոյելով կնոջ ձեռքերը): Սա մախմուր է, թէ ձեռք:

ՀԵՂ.— (Ձայնը փոխելով): Ո՞վ է:

ՋՈՒՄԾ.— Իմ Հեղուշը:

ՀԵՂ.— Ո՛հ:

ՋՈՒՄԾ.— Իմ հոգին, իմ կեանքը:

ՀԵՂ.— Այո: (Ձեռքերը վերցնում է):

ՋՈՒՄԾ.— Հը, ճիշտ իմացայ:

ՀԵՂ.— Դու որ կաս, մի իմաստուն ես:

ՋՈՒՄԾ.— Նո՛ր ես իմանում:

ՀԵՂ.— Այդ ինչո՞վ էիր զբաղուած:

(Հեղինէն իր երեսը բոլորովին մօտեցնելով Ջումուդի երեսին՝ նայում է նրա աչքեւ դրուած հաշուեմատեանին. Ջումուդը կոպիտ կերպով բռնում է նրա գլուխը եւ համբուրում: Հեղինէն բարկացած ետ է քաշվում):

ՀԵՂ.— Կամաց, առ արջ, երեսս պոկեցիր:

ՋՈՒՄԾ.— Ո՛ւր է, պոկվում է, որ մեղրի պէս ուտեմ:

ՀԵՂ.— Կարծես աւելի քնքոյշ չի կարող:

ՋՈՒՄՇ.—Ներողութիւն, ներողութիւն, միւս անգամ քնքոյշ կը համբուրեմ: Այ, օրինակ, հէնց հիմա: (Համբուրում է):

ՀԵՂ.—(Մեղմ): Այդ թնչ հաշիւներ են, սիրելիս:

ՋՈՒՄՇ.—Տան վրայ արուած ծախսերը:

ՀԵՂ.—Ծախսերը շատ են:

ՋՈՒՄՇ.—Էլ ասել է պէտք, եթէ բանը էսպէս գնայ, սիրելիս, մենք շատ շուտ կը քանդուենք:

ՀԵՂ.—Լաւ, ինչքան ես ծախսել:

ՋՈՒՄՇ.—Էլ հաշիւ կայ: Հեղուշ ջան, միայն քո շորերի և զարդարանքի վրայ էս ամիս գնացել է մօտ 200 մանէթ:

ՀԵՂ.—Ա՛, ուրեմն իմ շորերի վրայ մօխուածը երեսօթիս ես տալիս: Շնորհակալ եմ, շատ շնորհակալ եմ:

ՋՈՒՄՇ.—Վա՛, ինչպէս նեղացաւ: Հեղուշ ջան: (Վեր է կենում, որ մօտենայ կնոջը. նա երեսը դարձնում է):

ՀԵՂ.—Երանի ինձ համար ոչինչ չառնէիր:

ՋՈՒՄՇ.—Ի՞նչ ես խօսում, հոգիս, հալա լինի քո հագածն էլ, քո մաշածն էլ, կերածդ էլ, խմածդ էլ: 200 մանէթը թնչ փող է, որ սիրտդ կտորեմ:

ՀԵՂ.—Հապա ինչո՞ւ ամենից առաջ իմ շորերիս տուածդ աչքս կոխեցիր: Այլ չկա՞ր վրայ քիչ փող ես ծախսել. սկի այնուամէլ էլ չես գցում:

ՋՈՒՄՇ.—Սիրելիս, ինչե՞ր ես խօսում: Ես ե՞րբ եմ քեզանից խնայել:

ՀԵՂ.—Եթէ մէկ էլ քեզանից մի կօպէկ փող ուզեմ...

ՋՈՒՄՇ.—(Հեղինակի իրանը գրկելով): Մի նեղանար, հոգի ջան: Եթէ մեղաւոր եմ, ներիր, ես յիմարացայ, մի բան է ասացի: (Համբոյր):

ՀԵՂ.—(Կեղծ լաց): Հիմա... Սրանից յետոյ... ես թնչ սըրտով քեզնից փող ուզեմ:

ՋՈՒՄՇ.—Մի ուզիր, այլ պահանջիր, հրամայիր:

ՀԵՂ.—Հէնց այս բօպէիս ինձ փող էր հարկաւոր:

ՋՈՒՄՇ.—Հարկաւոր է՛ կը տամ:

ՀԵՂ.—Շուտով քրոջս հարսանիքն է: Մի կարգին գէրիս չունեմ...

ՋՈՒՄՇ.—Վա՛, էդ ինչ ասելու բան է: Չունես, կարել տուր: Ի՞նչքան է հարկաւոր:

ՀԵՂ.—Միայն կտորին ամենապակասը 60 մանէթ:

ՋՈՒՄՇ.—Միայն կտորի՞ն:

ՀԵՂ.—Շատ է: Չես ուզում, մի տա: Ես չեմ պահանջում:

ՋՈՒՄՇ.—Վա՛, ինչե՞ր ես խօսում, հոգիս, էս բօպէիս կը բերեմ: (Գնում է եւ իսկոյն բերում փողը):

ՋՈՒՄՇ.—Ա՛, էս քո 60 մանէթը, էս հինգն էլ աւելի:

ՀԵՂ.—Շատ շնորհակալ եմ:

ՋՈՒՄՇ.—Ինձանից էլ շնորհակալութիւն:

ՀԵՂ.—Քաղաքավարութիւնը պահանջում է:

ՋՈՒՄՇ.—Քաղաքավարութիւնը էն կը լինի, որ ինձ մի լաւ համբոյր տաս:

ՀԵՂ.—(Այտը դեմ է անում):

ՋՈՒՄՇ.—(Կրքատ համբոյր): Ա՛յ թէ որն է քաղաքավարութիւնը: Ինձ հետ քաղաքավարութիւնը մի կողմ գիր: Դու որ ինձ յիմար ես ասում, էդ ինձ աւելի է դուր գալիս:

ՀԵՂ.—Ուզում ես, այսուհետեւ բեղ միշտ յիմար ասեմ:

ՋՈՒՄՇ.—Ասա՛, ես հէնց դրանից եմ իմանում, որ ինձ սիրում ես:

ՀԵՂ.—Յիմար, յիմար, յիմար:

ՈՒՄՇ.—Ջան, ջան, ջան:

ՀԵՂ.—Դէ՛հ, այժմ ես գնացի:

ՋՈՒՄՇ.—Ո՛ւր ես գնում:

ՀԵՂ.—Լիճն: Դէրիացու կտոր առնելու: (Դրան մօտից): Զուժնուգ, լսում ես Գուգուշի ձայնը: Զարթնել է:

ՋՈՒՄՇ.—Մեր բլբուլը երգում է: (Հեղինակն գնում է հագնուելու: Քիչ յետոյ մտնում է Մագդան, գիմնագիական տարազով, գրքերը ձեռքին: Խոնարհ եւ լռեռ կանգնում է հօր առաջ):

Տ Ե Ս Ի Լ Բ.

Զուժնուգ եւ Մագդա

ՋՈՒՄՇ.—Հը՛, փող ես ուզում, Մագդա:

ՄԱԳ.—Այո, հայրիկ:

ՋՈՒՄՇ.—Յիսուն մանէթ է. չէ՛:

ՄԱԳ.—Այո՛:

ՋՈՒՄՇ.—Մագդա ջան, չի՞ կարելի վաղը տանես:

ՄԱԳ.—Ո՛չ, հայրիկ:

ՋՈՒՄՇ.—Հապա թնչ անենք: Հիմա ձեռիս էղքան փող չկայ:

ՄԱԳ.—Հայրիկ, պահանջում եմ:

ՋՈՒՄՇ.—Պահանջում եմ, էգուց կը տանես:

ՄԱԳ.—Հայրիկ, այսօր վերջին օրն է:

ՋՈՒՄՇ.—Գիտեմ ինչ կայ, Մագդա: Ծիշտն ասած, ուսմանդ փողը պտտրաստ պահած էր սեղանիս մէջ: Բայց քիչ առաջ հարկաւորուեց՝ վերցրի: Հիմա ձեռքիս չկայ, որ տամ: Վաղը կը տամ:

ՄԱԳ.—Քանի օր է՛ ասում ես «վաղը, վաղը», ու չես տալիս:

ՋՈՒՄՇ.—Կը տամ, էլի: Ինձ չես հաւատում: Որ չկայ, ես քեզ համար փող դառնամ:

ՄԱԳ.—Այժմ ես ինչպէս գնամ ուսումնարան:

ՋՈՒՄՇ.—Դու գնա: Կը պահանջեն՝ կասես՝ «վաղը կը բերեմ»:

ՄԱԳ.—(Մի պահ լռելով): Հայրիկ, երեսիս վրայ էլ ամօթատեղ չմնաց: Արդէն մի քանի անգամ խարել եմ:

ՋՈՒՄՇ.—Խարելն էն կը լինի, եթէ խոստանանք ու չը տանք: Գնա, աղջիկս, գնա:

ՄԱԳ.—(Լալալիկ): Հայրիկ, ինձ դուրս կանեն:

ՋՈՒՄՇ.—Աղջի, դուրս չիս անի, ես քեզ ասում եմ՝ գնա:

ՄԱԳ.—Այսօր վերջին օրն է:

ՋՈՒՄՇ.—Լաւ, իմացայ: Ինձ չիս հաւատում: Վաղը իմ պարտքը լինի յիսուն մանէթ դնել ձեռք ու ճամբել:

ՄԱԳ.—(Վարանելով): Ա՛խ, Աստուած ջան: (Գնում է):

ՋՈՒՄՇ.—Սրա բնույթն էլ մի խաթարալա չղաղմը մեր գլխին: (Մտնում է Հեղինէն այն բօլիկին, երբ Մագդան հեռանում էր «ա՛խ» քաշելով):

Տ Ե Ս Ի Լ, Գ.

Ջուսուդ եւ Հեղինէ

ՀԵՂ.—(Մագդայի ետեւից ատելութեամբ): Բա՛յդուշ:

ՋՈՒՄՇ.—Էդ ո՛ւմ ես ասում:

ՀԵՂ.—Աղիւղ աղջկադ: Հէնց «ա՛խ» է, որ լսում ենք: Առաւօտը վեր է կենում՝ «ա՛խ», պառկում է քնելու՝ «ա՛խ», մի քան կասես՝ «ա՛խ, ա՛խ, ա՛խ»:

ՋՈՒՄՇ.—Հէնց էդ ասա: Կարծես աշխարհի դարձը դրան են տուել: Սովորութիւն է շինել:

ՀԵՂ.—Հը, ինչ էր պատահել, որ էլի ախու վախը սկսել է:

ՋՈՒՄՇ.—Ես ինչ իմանամ: Ուսման վարձն էր ուզում:

ՀԵՂ.—Տարուայ տակին՝ գլխին ուսման վարձ: Ել ինչ դարձ:

ՋՈՒՄՇ.—Ասենք, ես խոստացել էի:

ՀԵՂ.—Ինչո՞ւ էիք խոստանում: Դու չէիր ասում, որ աղջկադ ուսումնարանից պիտի հանես:

ՋՈՒՄՇ.—Ասում էի, բայց... միւս կողմից էլ...

ՀԵՂ.—Միւս կողմից ինչ:

ՋՈՒՄՇ.—Միւս կողմից էլ խղճում էի, մեղքս էր դալիս:

ՀԵՂ.—Ի դուր: Դու նրան հօ չես մորթում: Հերեք չէ, ինչքան ուսում տուիր: Աղջկան ինչ կը սազի մեծ ուսումը:

ՋՈՒՄՇ.—Էդ ճշմարիտ է, ասենք:

ՀԵՂ.—Գրել-կարդալը սովորեց, բաւական չէ:

ՋՈՒՄՇ.—Ի հարկէ, բաւական է: Իսկ Մագդան աւելի շատ պիտէ:

ՀԵՂ.—Նրա ուսման վրայ ահագին փողեր ես ծախսել, հասցրել ես մինչև հինգերորդ դաստիարակ, հերեք չեղան: Ել ինչ է ուզում: Հիմա ես որ մեծ ուսում չունեմ, ունի՞րք եմ պակաս:

ՋՈՒՄՇ.—Պակաս չէ, ու դեռ շատերիցը աւելի ես:

ՀԵՂ.—Նա, որ էնքան «ուսում, ուսում» է ասում, կարծում ես՝ նրա դարձը հէնց ուսումն է: Բոլորովին ո՛չ: Նախանձիցն է տրաքվում: Ինչպէս կարելի է, որ ընկերները ուսում առնեն, իսկ ինքը մնայ:

ՋՈՒՄՇ.—Ի հարկէ, էդ էլ նշանակութիւն ունի:

ՀԵՂ.—Դու մի լաւ մտածիր, Ջումշուդ, Մագդան հիմա հօ մի մեծ ուսում չունի, բայց աբի ու տես, թէ ինչպէս հպարտացել է, ինչպէս քիթը վեր է քաշել ու ինձ նմաններին համարում է սղէտ ու անկիրթ: Իսկ եթէ նա ուսում առնի—ի հարկէ, այդ օրը նա չի տեսնի—այն ժամանակ էլ նրա հետ խօսել չի լինի:

ՋՈՒՄՇ.—Ծ՛մարիտ ես ասում: Հեղուշ ջան: Դո ասածը Աւետարանի կողքին է դրած: Մագդան առաջ համեստ, հնազանդ աղջիկ էր, հիմա տեսնում եմ՝ քանի շատ է ուսում առնում, էնքան աւելի համարձակ է դառնում:

ՀԵՂ.—Համարձակ, էն էլ ինչպէս: Փառք Աստուծու, դու ինքդ էլ տեսնում ես: Ուրեմն էլ ինչի՞ ես նրան ուսում տալիս, որ էսօր-էգուր աւարտի, գայ գլխներին նստի... Ափսոս չէ՞ այն փողը, որ դու նրա ուսման ես տալիս:

ՋՈՒՄՇ.—Դրուստ ես ասում, ես ու իմ հոգին:

ՀԵՂ.—Ուզում ես աղջկադ լաւութիւն անել. փեսացու ճարիր:

ՋՈՒՄՇ.—Հա, լաւ ես ասում: Հէնց ժամանակը եկել է:

ՀԵՂ.—Ի հարկէ, տասն-ութ տարեկան հասած աղջիկ է:

ՋՈՒՄՇ.—Ասենք՝ Մագդան դեռ տասն-վեցումն է:

ՀԵՂ.—Միևնոյն է: Ելի լաւ ժամանակն է:

ՋՈՒՄՇ.—Հեղուշ ջան, մի լաւ փեսացու կայ, աչքս է մտել:

ՀԵՂ.—Ո՞վ է այդ պարոնը:

ՋՈՒՄՇ.—Ա՛յ, էն Վանօն:

ՀԵՂ.—Վանօն:

ՋՈՒՄՇ.—Ինչի՞ դարմացար: Պակաս տղայ է:

ՀԵՂ.—Ո՞վ է քան ասում: Լաւ, յետոյ կը մտածենք: Ես գնում եմ դէրիացուն առնեմ:

ՋՈՒՄՇ.—Շահաւ կը գաս, Հեղուշ ջան:

ՀԵՂ.—Իսկոյն եեթ: Ձեզած պատրաստ է: (Գնում է):

ՋՈՒՄՇ.—Օրը կէսօր դառաւ, ես դեռ էս օրին եմ. գնամ

հազնուեմ: (Գնում է: Մի քանի վայրկեան բեմը մնում է դատարկ: Մտնում է Մագդան սաստիկ տխուր: Գրքերը նետում է մի կողմ եւ նստելով բազկաթոռի մէջ՝ ձեռքերով ծածկում է ս ջքերը, սկսում է հեկեկալ հագին լռելի ծայնով, որ ցոյց է տալիս նրա վշտի խորութիւնը: Պառագան տեսնում է մի քանի վայրկեան: Դրան մէջ երեւում է Զումշուդը ամառային զգեստով, ճեմեւելով, որ աղջիկը լալիս է, մօտենում է նրան: Մագդան վեր է կենում, բայց շարունակում է հեկեկալ):

Տ Ե Ս Ի Լ Դ.

Զումշուդ եւ Մագդա

ԶՈՒՄՇ.— Մագդա, ինչո՞ւ ես այդպէս մղկտում:

ՄԱԳ.— (Լալագին): Ուսումնարանից արձակեցին:

ԶՈՒՄՇ.— Արձակեցին: Դրա համար ես դարդ անում: Հէնց ինքս մտադիր էի քեզ ուսումնարանից հանել: Ինչի՞ է պէտք այդպիսի մեծ ուսումը:

ՄԱԳ.— Ո՛չ, հայրիկ, ես չեմ թողնի ուսումս:

ԶՈՒՄՇ.— Մագդա, խելքդ գլուխդ հաւաքիր: Ի՞նչ ես գիտել ուսման վրայ: Առանց ուսումի էլ կարող ես շատ բախտաւոր լինել: Քանի տարի է՝ ուսում ես առնում, հերիք չեղան: Ես, որ ուսում չեմ առել, ումի՞ց եմ պակաս. կարծում ես՝ ով ուսում չունի, նա կորած է աշխարհում:

ՄԱԳ.— Երբ մայրիկը կենդանի էր, դու ինձ հետ այդպէս չէիր խօսում:

ԶՈՒՄՇ.— Էդ ի՞նչ խօսք է, որ ասում ես:

ՄԱԳ.— Այո, ես ուղիղ եմ ասում: Դու առաջ ուրախ էիր, որ ես լաւ եմ սովորում: Երբ թուանշաններս բերում էի, դու էլ, մայրիկն էլ ուրախ-ուրախ վրայ էիր պրծնում, ձեռքիցս խլում. և երբ տեսնում էիր, որ բոլորը հինգ է, ինչպէ՞ս էիր զրկում, պաշտպանում: Իսկ այժմ մինչև անգամ չես հետաքրքրվում:

ԶՈՒՄՇ.— Է՛հ, Մագդա, անցած բաները մոռացիր:

ՄԱԳ.— Դու մոռացել ես, կարծում ես՝ ես էլ կը մոռանամ:

ԶՈՒՄՇ.— Առաջուայ բանը ջուկ, հիմիկուանը ջուկ:

ՄԱԳ.— (Կամացուկ): Այո, ի հարկէ հիմիկուայ բանը ջուկ է:

ԶՈՒՄՇ.— Աղջի, ի՞նչ ես մտքումդ խօսում: Բան ես ասում՝ ասա, ես էլ իմանամ:

ՄԱԳ.— (Լուռ է եւ քաղկիւնակով սրբում է աջքերը):

ԶՈՒՄՇ.— Դարդ մի անի, աղջիկս: Շուտով քեզ համար մի էնպէս ջահէլ. գեղալ փեսացու գտնեմ, որ ուսումդ էլ մոռանաս, հօրդ ու մօրդ էլ:

ՄԱԳ.— Ես մայրիկիս յաւիտեան չեմ մոռանայ:

ԶՈՒՄՇ.— Ապա թող մի փեսացուն լուս ընկնի, տեսնեմ

հնց չես մոռանայ: Քեզ պէս շատերն են էդպէս ասել. հէնց մէկը քո հանգուցեալ մայրը:

ՄԱԳ.— Ա՛խ, մահա ջան...

ԶՈՒՄՇ.— Վա՛, ծով է սրա աչքերը: Մարդ զաւաթ է անում՝ նրա անունը տալիս է, արտասուքը պատրաստ է:

ՄԱԳ.— Հայրիկ, ես ի՞նչպէս կարող եմ մայրիկիս մոռանալ, թէկուզ աշխարհն ինձ տան:

ԶՈՒՄՇ.— Դէ լաւ, ես ասացի, զաւաթ արի, գլուխս քարովը տուի: Հանդարտուիր, աղջիկս, սիրտդ տալին ու վրայ մի անի: Ուրախ կաց: Գնա՛, բալէս, կարդա՛, մի բանով զբաղուիր, որ տխրութիւնդ անցնի: Մի կարծիր, որ ես մայրիկիդ մոռացել եմ: Մէկ մէկ երբ յիշում եմ նրա հրեշտակէ բնութիւնը, քթիս մուխը ուղում է դուրս գայ: (Թաղկիւնակը հանում է, աջքը սրբում): Մագդա ջան, վաղուց է՝ ես քեզ չեմ սիրել, արի էդ սպիտակ ճակատդ համբուրեմ: (Համբուրում է եւ դուրս գալիս: Մագդան մնում է մենակ: Հօր հեռանալուն պէս շտապ մօտենում է այն սեղանին, որի վրայ դրուած է մեծ եւ շքեղ ալբոմ, բաց անելով նրա միջից հանում է մի լուսանկար եւ սկսում է ջերմագին համբուրել, կրկնելով՝ «մա՛մա ջան, մա՛մա ջան»: Յետոյ լուսանկարը դնում է իր տեղը: Մտնում է Սօնան):

Տ Ե Ս Ի Լ Ե.

Մագդա եւ Սօնա

ՄԱԳ.— Մօքիր ջան...

ՍՕՆԱ.— (Համբուրելով): Զանիդ մատաղ լինի մօքիրդ: Էլի՞ աչքերդ կարմրած են: Ինչի՞ համար ես ինձ կանչել:

ՄԱԳ.— Ա՛խ, մօքիր, ինչ անբախտ եմ ես ծնուել:

ՍՕՆԱ.— Ի՞նչ է պատահել, դադէդ քաղեմ: Ո՞վ է սրտիդ դիպել:

ՄԱԳ.— Մի ուրախութիւն ունէի, էն էլ գնաց:

ՍՕՆԱ.— Ախր ի՞նչ է պատահել, մի ասա տեսնեմ. հիվ է քեզ ցուրտ խօսք ասել:

ՄԱԳ.— Երանի՛ ինձ ցուրտ խօսք ասած լինէին, մօքիր ջան, երանի՛ ինձ ծեծած, ոտի տակ տրորած լինէին, մօքիր ջան... միայն թէ այս անբախտութիւնը ինձ չգար...

ՍՕՆԱ.— Ի՞նչ անբախտութիւն, ցաւդ տանեմ:

ՄԱԳ.— Ինձ ուսումնարանից դուրս արին:

ՍՕՆԱ.— Ո՞նց թէ դուրս արին:

ՄԱԳ.— Հայրիկը ուսման փողը չտուեց, դուրս արին:

ՍՕՆԱ.— Իսկ ինչո՞ւ չտուեց:

ՄԱԳ.— Ասում է՝ «փող չկայ»:

ՍՕՆԱ.— Փող չկայ... դու էլ հաւատացիր:

ՄԱԳ.—Ի՞նչպէս չէ, հաւատացի, Հէնց առաւօտը չէր, որ մի բռնը ոսկի լցրեց կնոջ ձեռքը, որ շոր կարել տայ: Էն իմ ուսման փողն էր, մօքիւր ջան, որ կնոջը տուեց:

ՍՕՆԱ.—(Գրկելով): Խեղճ իմ բարէս:

ՄԱԳ.—Մինչև այժմ հայրիկը այսօր-էգուց էր գցում, խաբում, օրը մի կերպ անց կացնում. իսկ այսօր ուղղակի յայտնեց, որ ինձ էլ ուսում չպիտի տայ: «Հերիք է, — ասում է, — ինչքան ուսում առար, հիմա պիտի մարդու գնաս»:

ՍՕՆԱ.—Բա դու չասացիր, որ քո մարդու գնալու ժամանակը չէ:

ՄԱԳ.—Է՛հ, նրանց մտքինը ես լաւ գիտեմ: Ուզում են ինձ գլխից ուղ անել, ուրիշ ոչինչ: Դա Հելէնի խորհուրդն է:

ՍՕՆԱ.—Ա՛խ, էդ Հելէնը, Հելէնը... Էդ փուչ կնիկը որ չլինէր, ետքաւ, Աստուած, աշխարհը սև կը հագնէր... Դիփնրա բաներն է: Ո՞նց է նա բարի, գեղալ Զումշուդին իր բոխ մէջ առել և մատնելի վրայ պար ածում:

ՄԱԳ.—Հա, մօքիւր, բոլորը, բոլորը նրա գործն է: Նա է հօրս խելքից հանում: Ի՞նչ ասես՝ ինձ վրայ չի խօսում, Աստուած վկայ, մօքիւր, ինձ հետ թշնամու պէս են վարվում: Կարծես դրանց աչքի գրողը, աչքի փուչն եմ ես:

ՍՕՆԱ.—Երևի դրանց աչքի լուսը հանել ես: Ա՛խ, ա՛խ, ա՛խ... քուսնար քո հէրը, որ էդ անհամուսին չտեսներ, տեսքից չխաբուէր:

ՄԱԳ.—Ա՛խ, ինչքան բարի էր իմ մայրիկը: Հրեշտակի սիրտ ունէր... իսկ այս մէկը՝ վայ ինձ, վայ ինձ... խօսք չեմ գտնում անունը տամ:

ՍՕՆԱ.—Կարծում ես՝ ամեն մի մայր քո մօր նման կը լինի:

ՄԱԳ.—Վերջին օրերը անքան շատ եմ տեսնում մայրիկիս:

ՍՕՆԱ.—Երազումդ:

ՄԱԳ.—Այո, այս գիշեր էլ տեսայ: Այնքան լաց եմ եղել, մօքիւր, որ երբ աչքս բաց արի, բարձա արտասուքից ջուր էր գառել:

ՍՕՆԱ.—Էդ նրանից է, որ մօրդ շատ ես կարօտում:

ՄԱԳ.—Ի՞նչ անեմ, մայրիկի պատկերը մտքիցս չի հեռանում, հիմա, հիմա մանաւանդ: Ուսումնարանում գոնէ ընկերուհիներին տեսնում էի ամեն օր, խօսում, խաղում, ծիծաղում էինք, սիրտս մխիթարվում էր, ամեն բան մոռանում էի... Հիմա թի՛նչ պիտի անեմ տանը, մօքիւր ջան: Պարապօտարապ, քայլուշի պէս մէն-մէնակ, վայ պիտի տամ իմ գլխին...

ՍՕՆԱ.—Ողորմած Աստուած, դու ո՞նց չխնայեցիր էս խեղճ գառնուկին, որ էսպէս անտէր, եթիմ թողեցիր:

ՄԱԳ.—Ես կը մեռնեմ, մօքիւր ջան:

ՍՕՆԱ.—Բերանդ խէր բաց արա, աչքիս լուս: Ես կը խօսեմ հօրդ հետ, կը համոզեմ, որ ուսմանդ փողը տայ:

ՄԱԳ.—Մօքիւր ջան, հոգուդ մեռնեմ, խօսի՛ր, խօսի՛ր հօրս հետ: Սուտ է ասում, որ փող չունի. փող շատ ունի, ինձանից խնայում է:

ՍՕՆԱ.—Ուրախ կաց, Մագդա ջան: Ես հօրդ հետ կը խօսեմ:

ՄԱԳ.—Կարծեմ, հայրիկն է...

ՍՕՆԱ.—Դու հեռացիր: Ես կը խօսեմ հետը: (Մագդա նեղանում է: Գալիս է Զումշուդը):

Յ Ե Ս Ի Լ Զ.

Զումշուդ և Սօֆա

ԶՈՒՄՇ.—Բարով ես՝ եկել, քոյրիկ:

ՍՕՆԱ.—Բարով, փեսայ:

ԶՈՒՄՇ.—Ի՞նչպէս ես, լաւ ես:

ՍՕՆԱ.—Փառք ստեղծողին: Զեղանից եմ հարցնում:

ԶՈՒՄՇ.—Նստի՛ր, քոյրիկ, Ի՞նչ բարի համբաւ:

ՍՕՆԱ.—Գոհութիւն Աստուծոյ, էնպէս բան չկայ: Միայն, փեսայ Զումշուդ, աստ տեսնեմ, ինչո՞ւ ես Մագդայի սիրտը կտորել: Ուսման փողը չես տուել, խեղճ աղջկան դուրս են արել:

ԶՈՒՄՇ.—Ասենք թէ դուրս են արել: Մագդայի թի՛նչը պակսեց: Աստուած վկայ է, ուրիշը նրա տեղ կուրախանար:

ՍՕՆԱ.—Լաւ ես հրամայում, փեսայ: Ծջմարիտ է, կան երեսներ, որ ուրախութիւնից պար կը գան, եթէ ուսումնարանից հանեն: Էդպիսիներին զօռով էլ ուսում չեն տայ: Բայց Մագդան, փեսայ ջան, դրանցից չէ: Աշխարհը գլխին սեպեց է, արտասուքը աչքիցը չի ցամաքում:

ԶՈՒՄՇ.—Մի օր, երկու օր դարդ կանի, յետոյ կը մոռանայ:

ՍՕՆԱ.—Դա մոռանալով բան է, որ ասում ես: Էն էլ ով, Մագդան: Մինչև կեանքի վերջը նա չի մոռանայ: Միշտ քո երեսովը պիտի տայ: Կասի՝ «Ա՛խ, հայրիկ, ինչո՞ւ ինձ ուսումնից զրկեցիր»: Մեղք չէ՞ էն եթիմը:

ԶՈՒՄՇ.—Ինչո՞ւ է եթիմ, քոյրիկս, փառք Աստուծոյ, ես մեռած չեմ, որ Մագդան եթիմ մնայ:

ՍՕՆԱ.—Աստուած չանի, փեսայ: Խօսքս քո մասին չէ, մօր մասին է: Ինչքան չլինի, խորթ է: Ուրիշ բան է խորթը և ուրիշ՝ հարազատը:

ԶՈՒՄՇ.—Ախր թի՛նչ հարկաւոր է աղջկան մեծ ուսում, դու ինձ էդ ասա: Փիլիսոփայ է դառնալու:

ՍՕՆԱ.—Փեսայ Զումշուդ, հիմիկուայ ժամանակը փոխուել է: Ապրիլը շատ է դժուարացել: Հիմա ամեն մէկը, լինի տղայ

թէ աղջիկ, իր գլխի ճարը պիտի տեսնի: Վայ էն ծնողներին, որոնք իրանց դաւաճներին անկիրթ կը թողնեն: Ուսումը որ կայ, հացն էլ կը լինի:

ՁՈՒՄՇ.—Բայց Մագդան հասած աղջիկ է, էսօր-էգուց ուզող կը լինի:

ՍՕՆԱ.—Ի՞նչ ես հրամայում, փեսայ, Մագդան դեռ երեւիայ է:

ՁՈՒՄՇ.—Տասն-վեց տարեկան՝ երեխայ է:

ՍՕՆԱ.—Երեխայ չէ, բա ինչ է: Դեռ տասն-վեցն էլ չի լրացել: Մեղք է նրան մարդու տալը: Թող մի քանի տարի էլ սովորի, վերջացնի գիմնադիան, էն ժամանակ, էլ խօսք չունենմ, մի լաւ փեսացու կը ճարենք, թող գնայ, բախտաւորուի, տուն դառնայ:

ՁՈՒՄՇ.—Սոստովանք լինի, իմ մեղքս էլ է գալիս, որ նա էնքան դարձ է անում, բայց...

ՍՕՆԱ.—Էդ «բայցը» թող, փեսայ **ՁՈՒՄՇ.** Արի խաթր արա աղջկադ: Աստուած վկայ, խղճմտանքի հակառակ բան է, ինչ որ արել ես: Մի ուրախութիւն ունէր, էն ուրախութիւնից մի զրկիր. մանաւանդ որ ինքն էլ էնպէս տաք-տաք կպած է իր ուսումից: Էս էլ մտածիր, որ Մագդան իր դասարանում առաջինն է: Ամենքը ասում են, որ նա **ՁՈՒՄՇ.** Բայց իմացիր՝ աղջիկդ չէ, այլ մի օտար, հոգուդ համար վարձք ես անում, փեսայ ջան:

ՁՈՒՄՇ.—(Մտախոյզ): Տան ծախսերն էլ էնքան շատացել են, որ, հաւատա՛, քոյրիկ, ծէրը ծէրին չի հասնում ու պարտք պարտի վրայ է գալիս:

ՍՕՆԱ.—Բա ի՞նչ էիր կարծում... էդպէս կը լինի: Ձեր հիմիկուայ շուայլ ծախսերին խազնա պիտի, որ գիմանայ: Առաջ ձի էր տեսել քո տանը էս տեսակ փարթամութիւն: Ուր մտիկ ես անում, դիփ մախմուր ու ապրեշում է, դիփ ոսկի ու արծաթ է: Բա դրանց փող կը գիմանայ: Տեսնում ես, փեսայ ջան, դրանց համար փող ունես, աղջկադ ուսման փող չկայ:

ՁՈՒՄՇ.—(Գլուխը խոնարհած լուռ մտածում է):

ՍՕՆԱ.—Երկար-բարակ մի մտածիր, փեսայ ջան, Աստուծոն մտիկ տուր: Քո մի խօսքը էնպէս կուրախացնի աղջկադ, որ Աստուած էլ կուրախանայ:

ՁՈՒՄՇ.—(Վճռողաբար, վեր կենալով): Շատ լաւ, քոյրիկս, քնա չունի... Թող էս տարի էլ շարունակի ուսումը... հալալ լինի նրան:

ՍՕՆԱ.—(Սեղմելով նրա ձեռքը): Շնորհակալ եմ, Աստուած կեանքդ երկարացնի:

ՁՈՒՄՇ.—Հիմա ձեռիս էնքան փող չկայ: Մնաց վաղը:

Ես ինքս իմ ոտով կը գնամ ուսումնարան, դիրեկտորից ներողութիւն կը խնդրեմ փողը ուշացնելու համար:

ՍՕՆԱ.—Ուրեմն կանչենք Մագդային, փեսայ ջան, և ուրախացնենք:

ՁՈՒՄՇ.—Մագդա, էստեղ արի: (Մագդան մտնում է ուրախ):

Տ Ե Ս Ի Լ Է.

Ջուտուդ, Սօնա և Մագդա

ՍՕՆԱ.—Աղջի, շնորհակալ եղիր. համաձայնեց:

ՄԱԳ.—Հայրիկ ջան... (նետվում է գիրկը):

ՁՈՒՄՇ.—Գնա, Մագդա ջան, էս տարի էլ սովորիր: Ես քո խաթրը չեմ ուզում կոտրի:

ՄԱԳ.—Մօքիր ջան, քեզանից էլ եմ շնորհակալ:

ՍՕՆԱ.—(Վեր կենալով): Դէ ֆաա բարով, փեսայ: Շատ շնորհակալ եմ, որ իմ խօսքս գետին չգցեցիր: Աստուած երկար կեանք տայ: Ուրախ կացէք, իրար հետ սիրով եղէք: Հաւատա՛, փեսայ, աշխարհիս երեսին ամենից բարձր բանը սէրն է: Մագդա ջան, դու խելօք աղջիկ ես, հօրդ, մօրդ հնազանդ եղիր: (Համբուրում է Մագդային եւ գնում):

ՁՈՒՄՇ.—Հիմա կարող ես գնալ դասերդ սովորել: Միամիտ կաց: Վաղը առաւօտեան ուսմանդ փողը պատրաստ է:

ՄԱԳ.—Ի՞նչ ուրախ եմ: (Թրվալով անցնում է իր սենեակը):

ՁՈՒՄՇ.—Հիմա արի ու Հեղուշին պատասխան տուր: Մարդ շուարում է ու չի իմանում՝ որին լսի: Մէկին խաթր ես անում, միւսը նեղանում է: Թշնամիս էլ ինձ պէս խաթրապահ չլինի: (Մտնում է Հեղինէն ձեռքին մի կապոց):

Տ Ե Ս Ի Լ Ը.

Ջուտուդ և Հեղինէ

ՁՈՒՄՇ.—Ապա մի նայեմ:

ՀԵՂ.—(Բաց է անում): Ի՞նչպէս է:

ՁՈՒՄՇ.—Հրաշալի է: Ի՞նչքան ես տուի:

ՀԵՂ.—Բոլորը գնաց: Մի քիչ էլ պարտք մնացի:

ՁՈՒՄՇ.—Պարտ մնացիր:

ՀԵՂ.—Այո, կուզե՞ս տանեմ յետ տամ: (Ցոյց է տալիս քի գնում է):

ՁՈՒՄՇ.—Դու գիտես, որ ես քեզ համար ոչինչ չեմ խնայում:

ՀԵՂ.—Իսկ ինչո՞ւ դէմքը թթուացրիր:

ՁՈՒՄՇ.—Ո՛ւր է: (Նայում է հայելու մեջ): Սա թթուած դէմք է:

ՀԵՂ.—Եթէ թթուած դէմք չէ, ցոյց տուր, որ ուրախ ես:

ՋՈՒՄՇ.—(Շինծու ծիծաղ): Ուրախ եմ, չեմ տեսում:

ՀԵՂ.—Ա՛յ, այդպէս: Այժմ ես գնում եմ դերձակի մօտ: (Շտապով ուղղում է քայլերը, բայց դրան մօտ մի բան յիշելով վերադառնում է): Ջուժնուդ, մի բան էի ուզում հարցնել: Փողոցում տեսայ Մազդայի մօրաքրոջը: Ինչի՞ համար էր եկել:

ՋՈՒՄՇ.—Մազդայի համար:

ՀԵՂ.—Ի՞նչ էր ասում:

ՋՈՒՄՇ.—Մազդայի համար էր խնդրում: Էնքան խնդրեց, աղաչեց, որ ես էլ...

ՀԵՂ.—Դու էլ փողը տուի՞ր:

ՋՈՒՄՇ.—Չտուի, բայց խոստացայ վաղը տալ:

ՀԵՂ.—Ջուժնուդ, եթէ տաս, իմացիր, որ քեզանից վատ մարդ չկայ աշխարհում: Եւ ես սաստիկ կը բարկանամ:

ՋՈՒՄՇ.—Հեղուշ ջան...

ՀԵՂ.—Ես արդէն ասացի:

ՋՈՒՄՇ.—Հեղուշ ջան, թող միայն էս տարի էլ սովորի...

ՀԵՂ.—Ո՛չ, ես չեմ կամենում:

ՋՈՒՄՇ.—Ախր ինչո՞ւ, մի ասա տեսնենք:

ՀԵՂ.—Աւելորդ փող ունես՝ տար գցի բանկը Գուգուշի անունով:

ՋՈՒՄՇ.—Դէ մի ինձ լսիր է՛:

ՀԵՂ.—Ոչինչ չեմ ուզում լսել: Մազդան ուսումնարան չպիտի գնայ:

ՋՈՒՄՇ.—Հեղուշ ջան...

ՀԵՂ.—(Ականջները փակում է): Ես չեմ լսում: Նրա մօրաքրոջ խաթրը չեմ ուզում կոտրել: Լաւ, շատ լաւ: Հիմա քեզ ճանաչեցի:

ՋՈՒՄՇ.—Ախր չեմ ուզում ինձ լսել է՛... (Մօտենում է):

ՀԵՂ.—Ինձ մի մօտենա...

ՋՈՒՄՇ.—Հեղուշ ջան:

ՀԵՂ.—Ինձ ջան մի ասի:

ՋՈՒՄՇ.—Հոգիս, հրեշտակս ..

ՀԵՂ.—Ես քո հոգին չեմ, քո հրեշտակը չեմ: Դու ինձ չեմ սիրում:

ՋՈՒՄՇ.—Եթէ քեզ չեմ սիրում, էլ ո՞ւմ եմ սիրում աշխարհում, ո՞ւմ: Ինձ համար դու մի կողմ, սաղ աշխարհը մի կողմ:

ՀԵՂ.—Այո, միայն խօսքով:

ՋՈՒՄՇ.—Խօսքով էլ, գործով էլ:

ՀԵՂ.—Ուրեմն այդ բանը չե՞մ անի:

ՋՈՒՄՇ.—Էս ի՞նչ կրակի մէջ ընկայ ես:

ՀԵՂ.—(Յոյց տալով փաթրոցը): Ա՛յ, իսկոյն յետ կը տանեմ:

ՋՈՒՄՇ.—Էդ էր մնացել:

ՀԵՂ.—Չեմ հաւատում: (Սկսում է փաթարել):

ՋՈՒՄՇ.—Վա՛, հանձը ես անում: (Բռնում է նրա ձեռքից): Աստուած սիրես, թող: Քո ուզածը ի՞նչ է. որ Մազդան ուսումը թողնի: Լաւ, քո ասածը լինի: Այսօրուանից Մազդայի ուսումը վերջացաւ: Գո՛հ ես:

ՀԵՂ.—Հիմա էլ խօսք չունեմ:

ՋՈՒՄՇ.—Հիմա էլ կասես՝ չեմ սիրում:

ՀԵՂ.—Սիրում ես, սիրում ես:

ՋՈՒՄՇ.—Հիմա էլ կասես՝ խաթրդ կոտրում եմ:

ՀԵՂ.—Երբէք, երբէք:

ՋՈՒՄՇ.—(Գրկելով): Հեղուշ ջան, իմ հոգիս, իմ կեանքս դրած եմ քեզ համար:

ՀԵՂ.—Այժմ կոնչիր աղջկադ և յայտնիր:

ՋՈՒՄՇ.—Լաւ, յետոյ, յետոյ:

ՀԵՂ.—Ես կամենում եմ այժմ, այս րօպէիս: Թող նա չը կարծի, որ ինձ յաղթեց:

ՋՈՒՄՇ.—Մազդա՛ (Մազդան մտնում է ուրախ եւ զիբքը ձեռքին):

Տ Ե Ս Ի Լ Թ.

Ջուժուդ, Հեղինէ եւ Մազդա

ՋՈՒՄՇ.—Մազդա, քիչ առաջ ես սխալմամբ մի խօսք թոյրի բերնիցս: Ի հարկէ, ես լաւ չարի, որ քեզ յոյս տուի, բայց էսօրուանից քո ուսումը վերջացած է: (Ջուժուդը խղճահարուած չէ կարող ուղիղ նայել աղջկան եւ զլուսը խոնարհել է: Հեղինէն ջարախնդաց եւ յաղթական դեմքով նայում է մի կողմ: Մազդայի կրակոտ աչքերում փայլում են զսպուած արտասուքներ: Խեթ նայելով Հեղինէի վրայ՝ խոր ատելութեամբ լցուած անցնում է իր սենեակը):

Վ Ե Ր Ե Գ Ո Յ Ի

ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ ԵՐԿՐՈՐԴ

Միևնոյն տեսարանը: Միայն սենեակից չարքուած և անկարգ զրու-
թիւն է ստացվում: Մազդան հասարակ տնային զգեստով կարգի է բերում
սենեակը: Մտնում է Նինան, որ նրա հարեանուհին և դասընկերուհին է,
Հետեւալ օրը: Առաւօտ:

Տ Ե Ս Ի Ա.

Մազդա և Նինա

Նինա.—Մազդա ջան, ուսումնարան չես գնում:

ՄԱԳ.—Նինա ջան, ինձ համար այլ ևս ուսումնարան
չկայ:

Նինա.—Ձե՞ որ հայրիկդ խոստացել էր այսօր վճարել:

ՄԱԳ.—Այո, բայց խոստումը չկատարեց:

Նինա.—Ուրեմն ուսումդ թողնում ես:

ՄԱԳ.—Այո, ստիպում են:

Նինա.—Միթէ հայրդ այդքան անխիղճ է:

ՄԱԳ.—Նա մեղաւոր չէ: Նա կատարում է միայն իր
կնոջ հանոյքը: Ակամայ գնում է իր խղճի դէմ:

Նինա.—Մազդա, ինչ անտանելի կին է այդ Հելէնը: Վը-
հուկ է, վհուկ: Զարմանում եմ, ինչպէս է քո հայրը համ-
բերում:

ՄԱԳ.—Դու չգիտես, Նինա: Հօրս նա այսպէս բոի մէջ է
պահում և սպունգի պէս քամում է հիւթը: Հրամայում է նը-
րան, ինչպէս ծառայի. բարկացած ժամանակ ոտը խփում է
գետնին, մատը թափ է տալիս վրան և ստիպում է կատարել
իր իւրաքանչիւր քմահաճոյքը:

Նինա.—Իսկ հայրդ:

ՄԱԳ.—Հայրս նրա առաջ ճտի պէս դողում է: Հօրս նա
դարձրել է իր խաղալիքը: Հայրս նրա ոտի տակի հողն է:

Նինա.—Բայց ինչո՞վ է նա կարողացել այդպիսի իշխա-
նութիւն ձեռք բերել հօրդ վրայ:

— 17 —

ՄԱԳ.—Երկի իր գեղեցկութեամբ: Երկի նրա մէջ կայ մի
ոյժ, որ հօրս խեղճացնում է:

Նինա.—Մազդա, ես կարծում եմ, որ այդ բոլորը առաջ
է գալիս քո հօր թուլութիւնից: Իր սանձը նա տուել է կնոջը:

ՄԱԳ.—Ո՞ւր է, եթէ հայրս էլ մի քիչ ուժեղ մարդ լի-
նէր: Այն ժամանակ ես այսպէս անբախտ չէի լինի: Գիտես,
Նինա ջան, իմ հայրը, Աստուած վկայ, իր բնաւորութեամբ
շատ լաւ մարդ էր, բայց նրան փչացրեց կինը: Մօրս կենդա-
նութեան օրով նա բոլորովին ուրիշ մարդ էր: Ո՞վ էր տեսել,
որ նա երբեք ինձանից մի բան խնայէր, կամ մի ցուրտ
խօսք ասէր: Բայց հէնց որ այս չար սատանան մտաւ մեր
յարկի տակ, ամեն բան փոխուեց, սառաւ, և սկսեց ինձ հետ
շատ կոպիտ վարուել, կարծես այլ ևս նրա հարազատ աղջիկը
չէի, այլ մի բոլորովին օտար աղջիկ, որին նա ողորմութիւն
էր անում, իր տանը պահում և կերակրում:

Նինա.—Ի՞նչ անբախտ աղջիկ ես, Մազդա:

ՄԱԳ.—Ա՛խ, Նինա ջան, անասելի անբախտ եմ: Ես այն-
պէս մեծեցի եմ այս տանը, որ կարծես բանտի մէջ եմ: Ես գի-
տեմ, իմ վերջը թոյնն է:

Նինա.—Ի՞նչ յիմար բան ես ասում, Մազդա:

ՄԱԳ.—Այդ կինը, ես գիտեմ, իմ գլուխս պիտի ուտէ:

Նինա.—Մազդա, եթէ իմանաս ինչե՞ր են խօսում Հելէնի
մասին:

ՄԱԳ.—Ի՞նչ են խօսում: Ոչինչ չեմ լսել:

Նինա.—Իբր թէ շատ մօտ է Վանո անունով մի աղի
հետ:

ՄԱԳ.—Այդ ստահակի անունը ես լսել եմ: Նինա ջան,
աղաչում եմ ասա ումի՞ց իմացար:

Նինա.—Ոչ ոքի չեմ ասի:

ՄԱԳ.—Վստահ եղիր:

Նինա.—Իմ եղբայրը: Ռուբէնը:

ՄԱԳ.—Խեղճ իմ հայր, եթէ իմանայ...

Նինա.—Ուրախ չեմ, որ իմանայ: Դա հօրդ աչքը բաց
կանի, խելքի կը գայ և կը ջոկի իր բարեկամներին թշնամի-
ներին:

ՄԱԳ.—Բայց դա մեր տան համար մեծ պնդատուութիւն
է, մանաւանդ հօրս համար:

Նինա.—Հելէնը գալիս է, ես փախչում: (Նիման դուրս
գալու ժամանակ հանդիպում է Հելլինին):



407-84

Տ Ե Ս Ի Լ Գ.

Հեղինէ եւ Մագդա

Հեղ.—Այս ինչ անկարգութիւն է այստեղ: (Մատը քսելով սեղանին): Ամեն տեղ փռի, կեղտոտութիւն: Կէս օր է դառել, սենեակը դեռ այս դրութեան մէջ է: Հիւր գայ, կը կարծի, թէ այստեղ խոզեր են ապրում: Նա ինչի՞ էր եկել այստեղ:

ՄԱԳ.—Եկել էր ինձ տեսնելու:

Հեղ.—Իբր թէ քիչ էր իրար տեսնում: Ինչ քան ունի մեր տանը այսպէս կանուխ:

ՄԱԳ.—Մէկ ասում ես՝ կէսօր, մէկ էլ՝ կանուխ:

Հեղ.—Դու խօսքի տակ կը մնաս: Անպատկան:

ՄԱԳ.—(Կամաց, համարեա մտքումը): Այդ ես չեմ:

Հեղ.—Սենեակը սրբի՞ր, վերջացրո՞ւ: (Կամենում է գնալ):

ՄԱԳ.—Ես քո ազատիւնը չեմ: Ես իմ կամքով էի սրբում:

Հեղ.—Մագդա, դու քեզ շատ վատ ես պահում:

ՄԱԳ.—Հարց է, թէ ով է իրան վատ պահում:

Հեղ.—(Մտենալով ապտակում է): Լի՛րբ:

ՄԱԳ.—Չհամարձակուես: (Զայրոյթի լաց):

Հեղ.—Ումից ես սովորել այդ յանդգնութիւնը: Նինայից: Ես նրա ոտը կը կտրեմ մեր տանից: Սպասի՛ր: Ես հօրդ կը յայտնեմ քո անպատկառ վարմունքը ինձ հետ: Դու պէտք է վերջապէս լեզուիդ չափը ճանաչես և իմանաս, թէ ում հետ ես խօսում:

ՄԱԳ.—Դու ինձ հալածում ես... դու ինձ համբերութիւնից հանում ես... վերջը շատ վատ կը լինի... (Շտապ նետանում է):

Հեղ.—Ինչ կուզես, արա՛:

Տ Ե Ս Ի Լ Գ.

Հեղինէ

Հեղ.—Սպասի՛ր... այնպէս սիրող դադեմ, որ մինչև մահդ ինձ չմոռանաս: (Ալքով միջից հանում է Մագդա) ի մօր լուսանկարը): Սա չէ՞ քո ազիզ մայրիկը: Ա՛յ... (Պատկերը կտոր կտոր է անում եւ քափում): Դէ գնա՛... Վա՛յ տուր գլխիդ... Մօրդ միակ յիշատակը ոչնչացաւ:

(Պետրոսը, տեսնելով նրա արարքը, կանգ է առնում դռան մէջ. երբ նա գործողութիւնը վերջացնում է, ներս է գալիս):

Տ Ե Ս Ի Լ Գ.

Հեղինէ եւ Պետրոս

ՊԵՏ.—Խանութ, վաճառ եկել է:

Հեղ.—Վաճառ... Հոգը գլխիս... Սենեակը դեռ այս դրութեան է: Պետրոս, շուտ կարգի բեր: Մենք կարենա՞նք ենք: (Հեղինէն գնում է: Պետրոսը հաւաքում է յատակի վրայ քափուած լուսանկարի կտորները): Սա Մագդայի ազիզ մէքն է... Ի՞նչ օրն է գցել անիրաւը... Է՛սքան էլ չար կնիկ՝ կեսնքումս չեմ տեսել... Խեղճ Մագդա, սիրտը ինչպէս պիտի մղկտայ: Հեղին խանութը որ կայ, իսկական օճ է, էն էլ շատ թունաւոր օճ: (Պետրոսը կտորները դնելով գրպանը՝ գնում է: Մտնում է Հեղինէն, յետոյ Վանօն):

Տ Ե Ս Ի Լ Ե.

Հեղինէ եւ Վանօ

(Նստում են զանաւորակի վրայ իրար շատ մօտ):

ՎԱՆՕ.—Հոգեմէս, մի ամբողջ շաբաթ է քեզ չեմ տեսել:

Հեղ.—Վանօ ջան, մի քիչ կամաց խօսիր:

ՎԱՆՕ.—Ո՞վ կայ տանը:

Հեղ.—Միայն Մագդան է: Ա՛խ, Վանօ, ինչպէս էի քեզ կարօտել:

ՎԱՆՕ.—Իսկ ես... (Գրկում է եւ համբուրում):

Հեղ.—Ո՞րտեղ էիր, Վանօ, չէիր երևում:

ՎԱՆՕ.—Ես երևում էի, դու չէիր երևում: Ուր գնում եմ, ուր փնտռում եմ քեզ, ոչ մի տեղ չկաս:

Հեղ.—Գիտե՞ս ինչ, վերջին օրերը ես զիտմամբ խուսափում էի քեզնից:

ՎԱՆՕ.—Ինչո՞ւ:

Հեղ.—Ջուճուղը կարծես գլխի է ընկել: Անցեալ կիրակի, երբ մենք զբօսնում էինք այդու և նա մեզ տեսաւ, ես նկատեցի, որ նա այլայլուեց: Իսկ երբ եկանք տուն, ամբողջ օրը հետս չխօսեց:

ՎԱՆՕ.—Ուրեմն պէտք է զգոյշ լինել:

Հեղ.—Ես նրանից չեմ վախենում: Ես նրա զլխումը նշտեցրել եմ, որ ինձանից հաւատարիմ կին ողջ աշխարհում չի գտնի: Ես ինքս նրան ամաչեցրի և ստիպեցի մինչև անգամ ներողութիւն խնդրել ինձնից:

ՎԱՆՕ.—(Ծիծաղում է):

Հեղ.—Բայց չկարծես, որ միայն այդ է պատճառը. շուտով քրոջս հարսանիքն է. պատրաստութիւններն մէջ ենք:

ՎԱՆՕ.—Այժմ հասկանալի է: Իսկ ես կարծում էի, թէ Հեղուշն ինձ մոռացաւ:

Հեղ.—Ես քեզ մոռանամ: Միթէ ինձ նոր ես ճանաչում: Դու չգիտես, որ ես ամբողջ աշխարհը չեմ փոխի քեզ հետ:

ՎԱՆՕ.—Իմ անգիւնն Հեղին: (Սեղմում է ձեռքը):

Հեղ.—Վանօ, դու կը գտնաս իմ քրոջ հարսանիքին:

ՎԱՆՕ.—Ուրախութեամբ, եթէ հրաւիրեն:

Հեղ.—Ես ինքս կը յիշեցնեմ, եթէ մոռանան: (Մտնում է Զումշուկը ուրախ, ձեռքին մի շիշ կօնեակ):

Տ Ե Ս Ի Լ Ա.

Զումշուկ, Հեղինէ և Վանօ

ԶՈՒՄՇ.—Վանօ, դու էստեղ. բարով ես եկել:

ՎԱՆՕ.—Ես եկել եմ պարտքս տալու, խիղճս մաքրելու:

ԶՈՒՄՇ.—Ի՞նչ պարտք, ի՞նչ խիղճ:

ՎԱՆՕ.—Վն, մոռացել եմ թղթախաղում տանուլ տուածս:

ԶՈՒՄՇ.—Հէր օրհնած, ի՞նչ շտապելու բան էր:

ՎԱՆՕ.—Ո՛հ, Զումշուկ, ես քեզ հետ համաձայն չեմ: Եթէ պարտքը մնայ, կ'որաւ, որովհետեւ փողի վրայ արծիւ կայ, մէկ էլ տեսար՝ թռաւ: (Տալիս է փողը):

ԶՈՒՄՇ.—Լաւ ես ասում, աղբէր, աղնիւ մարդը էսպէս կը լինի:

ՎԱՆՕ.—Այժմ ինձ կը ներէք:

ԶՈՒՄՇ.—Ձեմ թողնի, մինչև էս կօնեակից չխմեցնեմ: Հեղուշ, երկու թիւմկա: (Հեղինէն զնում է եւ բերում):

ԶՈՒՄՇ.—(Հանում է խցանը): Վանօ, տեսնո՞ւմ ես, ի՞նչ գոյն ունի:

ՎԱՆՕ.—Հրաշալի է:

ԶՈՒՄՇ.—Ձագրանիչնի է: (Լցնում է թխակաւերը: Թաւսերը խփում են իրար եւ խմում): Քո կենացը, Վանօ, Հը, հնց է:

ՎԱՆՕ.—(Երգելով): Նեկտար է, և ոչ զինի, խմենք մեկ անուշ լինի:

ԶՈՒՄՇ.—Կեցցես, շատ տեղին էր քո երգը: Մէկ էլ:

ՎԱՆՕ.—Ո՛հ, չեմ կարող:

ԶՈՒՄՇ.—Ի՞մ և Հեղինէի խաթրու:

ՎԱՆՕ.—Ուրախութեամբ: Տիկին, ձեր թանկագին կենացը և ձերը, պարոն Զումշուկ: Այժմ ցտեսութիւն (Գնում է):

ԶՈՒՄՇ.—Ի՞նչ փեսացու է:

Հեղ.—Անտանելի է:

ԶՈՒՄՇ.—Ի՞նչ ես ասում, գեղեցիկ տղամարդ է: Նրա աչքերը, աչքերը:

Հեղ.—Գորտի նման են:

ԶՈՒՄՇ.—Նրա խուճուճ մազերը:

Հեղ.—Գզգռաւ:

ԶՈՒՄՇ.—Նրա երեսի խաւը:

Հեղ.—Ձգուելի է:

ԶՈՒՄՇ.—Ինչ որ էլ ասես, Մագդալին պիտի տամ նրան, մի լաւ բաժինը էլ հետը:

Հեղ.—Բաժինք... Աղջիկդ դրան արժանի է: Դու որ աղջկանդ բախտաւորութիւնը քեզ համար մի մեծ հոգս ես չի՛նել, այն էլ մտածել ես, թէ ինչպէս է վարվում ինձ հետ:

ԶՈՒՄՇ.—Ձլինի էլի սիրտդ նեղացրել է:

Հեղ.—Զումշուկ, աղջկադ սանձը քաշի՛ր, թէ չէ՝ վերջը վատ կը լինի:

ԶՈՒՄՇ.—Ի՞նչ է պատահել:

Հեղ.—Այնպէս կապը կտրել է, որ հետը խօսել չի լինում: Քիչ առաջ տուն եկայ, ինչ տեսնեմ. սենեակը անկարգ, չորս կողմ կեղտոտութիւն, ինքն էլ Նինայի հետ կանգնած հրհուճ կ'իմ:

ԶՈՒՄՇ.—Վանօն երբ եկաւ, սենեակը անկարգ էր:

Հեղ.—Ի հարկէ, ես նրան քո կարէնստում ընդունեցի, մինչև սենեակը սրբեցին:

ԶՈՒՄՇ.—Ինչո՞ւ ժամանակին չէիք սրբել տունը:

Հեղ.—Պետքսը ուշացաւ, աղջկադ ասում եմ՝ սրբիր, պատասխանում է. «Ես ձեր աղախինը չեմ»:

ԶՈՒՄՇ.—Ես նրան ցոյց կը տամ:

Հեղ.—Առաջ էլի փառք էր, երբ գնում էր ուսումնարան. դոնէ աչքիցս հեռու էր, սիրտս հանգիստ էր: Հիմա որ տանն է մնում, էլ դադար չկայ նրա ձեռիցը: Ամեն րօպէ նեղացնում է, արիւնս պղտորում: Անտանելի է դարձել:

ԶՈՒՄՇ.—Ես նրան խելքի կը բերեմ:

Հեղ.—Ասում եմ՝ երեխին օրօրի՛ր, պատասխանում է. «Ձեր դայեակը չեմ»:

ԶՈՒՄՇ.—Վամ...

Հեղ.—Ասում եմ՝ քեզ լաւ չես պահում, պատասխանում է. «Դու ես, որ քեզ լաւ չես պահում»:

ԶՈՒՄՇ.—Վա, ի՞նչ փշացել է: Ես նրան կը կանչեմ, կը խօսեմ հետը:

Հեղ.—Դու գիտես քո աղջիկը: (Գնում է):

ԶՈՒՄՇ.—Մագդալ: (Մագդալն զայիս է):

Տ Ե Ս Ի Լ Է.

Ջուսուղ և Մագդա:

ՋՈՒՄՇ.— Էստեղ արի:

ՄԱԳ.— (Առաջ է գալիս):

ՋՈՒՄՇ.— Աղջի, չես ամաչում:

ՄԱԳ.— (Գլուխը խոնարհ, անպատասխան):

ՋՈՒՄՇ.— (Բարձրացնելով նրա գլուխը): Ինձ նայիր:

ՄԱԳ.— Հայրիկ...

ՋՈՒՄՇ.— Ի՞նչպէս ես համարձակվում մօրդ հակառակել:

ՄԱԳ.— Հայրիկ, ես նրան...

ՋՈՒՄՇ.— Հայրիկ, հայրիկ... Դու հայր ես ճանաչում, դու մայր ես ճանաչում... Ես քեզ քանի անգամ եմ ասել, որ մօրդ հետ քաղաքավարի վարուես, խոնարհ, հնազանդ լինես, ամեն մի խօսքին չպատասխանես:

ՄԱԳ.— Նա է ինձ հետ կողիտ վարվում, հալածում:

ՋՈՒՄՇ.— Ինչո՞ւ ես նրան բարկացրել:

ՄԱԳ.— Ես նրան ի՞նչ եմ ասել որ: Նա ինձ հետ վարվում է՝ ինչպէս աղախնի հետ... շարունակ հայհոյանք, անէծքներ...

ՋՈՒՄՇ.— Ծառան տանը չէ, նա քեզ ասում է՝ սենեակը սրբիր, դու պատասխանում ես. «Ես ձեր աղախինը չեմ»:

ՄԱԳ.— Միթէ անաճիկ անգամն է, հայրիկ, որ ես սենեակ եմ սրբում: Ես երբէք չեմ խորշել մեր սենեակները սրբելուց: Բայց ես նեղացայ, որ ինձ վրայ գոռաց, ինչպէս աղախնի վրայ:

ՋՈՒՄՇ.— Դու պատիկ ես. քեզ վայել չի էդպէս վարուել քեզանից մեծի հետ, մանաւանդ որ մայրդ է:

ՄԱԳ.— Հայրիկ, հաւատն ինձ, ես նրա հետ միշտ լաւ եմ հղել: Նա է որ մեր տունը հկաւ թէ չէ՝ թշնամացաւ ինձ հետ... Չգիտեմ, ինչ եմ արել ես նրան... միշտ բարկացած է վրաս. մի հատ բազր խօսք չեմ լսել նրանից... միշտ «չոռ ու ցաւ, լիբը, անզգամ, գետին մտած»... Սյուր մինչև անգամ նա ինձ ապտակեց: Սկզբում ես նրան աջակէս սիրում էի... «մայրիկ ջան, մայրիկ ջան» էի ասում: Ես կարծում էի, որ նա իմ մօրը տեղը պիտի տար, բայց ինչ դուրս եկաւ: Նա զարձաւ ինձ համար իսկական խորթ մայր:

ՋՈՒՄՇ.— Դու կարծում ես, նա քեզ չի սիրում, հա՞:

ՄԱԳ.— Մազի չափ էլ:

ՋՈՒՄՇ.— Երեւի դու նրան տեղիք ես տալիս:

ՄԱԳ.— Երբէք: Միշտ նա է սկսում առաջինը: Նա ինձ աջակէս ատում է... եթէ մեռնեմ, նա կուրախանայ:

ՋՈՒՄՇ.— Ինչե՞ր ես խօսում, Մագդա:

ՄԱԳ.— Անցեալ օրն էլ ասաց. «Երբ կը լինի, որ քեզանից ազատուեմ»:

(Հեղինէն, որ դրան ետեւից ականջ էր դնում, Մագդայի վերջին խօսքերի վրայ չարացած՝ յարձակվում է):

Տ Ե Ս Ի Լ Է.

Ջուսուղ, Հեղինէ և Մագդա

ՀԵՂ.— Դու սուտ ես... Երբ եմ ես այդպիսի բան ասել, համ մօտ եմ ասել:

ՄԱԳ.— Ոչ ոք չկար, որ լսէր, բայց դու ասել ես, և մի քանի անգամ:

ՀԵՂ.— Սուտ ես ասում:

ՄԱԳ.— Ո՛չ, դու ուրախ ես, որ ես մեռնեմ:

ՀԵՂ.— Այդ դու ես ուրախ, որ ես մեռնեմ, որովհետեւ դու ինձ ատում ես, դու իմ մահն ես ցանկանում:

ՋՈՒՄՇ.— Հանգարտուի՛ր, Հեղուշ, սիրող մի՛ նեղացնի... (Գլխով Մագդային): Դու սուտ կաց, լսի՛ր:

ՀԵՂ.— Ես էլ չեմ կարող համբերել... չեմ կարող... Այստեղ է հասել... Անտանելի է... Օ՛... խեղդուեցի...

ՋՈՒՄՇ.— Ախ դու անզգամ աղջիկ... ես...

ՀԵՂ.— Ես հասկանում եմ քո նպատակը: Հօրդ ուզում ես զրգոել ինձ դէմ, սառցնել ինձնից և մեղ իրարից բաժանել:

ՄԱԳ.— Այդ քո նպատակն է, ոչ թէ իմ:

ՀԵՂ.— Լսեցի՛ր, Ջումշուղ: Մա միշտ աջակէս է:

ՋՈՒՄՇ.— (Ձեռքը բարձրացնելով): Անպիտան աղջիկ, ձէնդ կտրիր... Էս բօպէիս կը սատկեցնեմ: Հոգիդ կը հանեմ... ոտիս տակը կը զցեմ... Դու ինչպէս ես համարձակվում մօրդ վրայ ձէնդ բարձրացնել:

ՄԱԳ.— (Յուսահատական ձայնով): Ի՞նչ էք ուզում ինձանից, անաստուածներ... Ինչո՞ւ էք ինձ կամաց-կամաց մորթում... Մի անգամից սպանեցէք, որ ես էլ հանգստանամ, դուք էլ:

ՀԵՂ.— Գոռն, աւելի բարձր գոռն...

ՋՈՒՄՇ.— (Շուարած): Տէր Աստուած, էսպէս էլ բան կը լինի... Առաւօտից մինչև երեկոյ կուր ու զաւրադար, լաց ու կոծ... Հէր օրհնածներ, ինչ կը լինի որ մի քիչ սիրով ապրէք իրար հետ, ինչ հաշիւ ունէք, ինչ էք տուել իրար, որ չէք կարողանում ստանալ:

ՀԵՂ.—Աղջկադ ասան, ի՞նչ ես ասում:

ՋՈՒՄ.—Քեզ էլ եմ ասում, նրան էլ եմ ասում: Ձեզ չէք խղճում, գոնէ ինչ էլ է խղճացէք:

ՀԵՂ.—(Վերադարձւած): Ելի վերջումը մեղաւորը ես պիտի դուրս դամ: (Շտապ հեռանում է):

ՋՈՒՄՇ.—(Գնալով նրա ետեւից): Հեղճւշ, Հեղճւշ...

ՄԱԳ.—Աստուած ջան, մի ճար արան, ինչ ազատիր սրանց ձեռիցը: (Թուլացած ընկնում է բազկաթռօի մէջ):

Վ Ե Ր Ը Գ Ո Յ Ր

ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ ԵՐՐՈՐԴ

Միևնոյն տեսարանը: Դուրսը սաստիկ խաւար է և լուսթիւն: Պատ-
րաստում է փոթորիկ: Երեկոյ: Երկրորդ և երրորդ դրժողութեան մէջ և ան-
ցել է մի շաւաթ: Հարեանների բնակարանից լսվում է մեղմ երաժշտու-
թիւն: Ջութակ նուագողը Նինայի եղբայրն է: (Են լսեցի մի անուշ ձայն):
Մագդան հոգեգմայլ ունկնդիր է նուագածութեան, որի ընդհատուելուց յետոյ
զգացում կրկնում է երգի եղանակով. «Բայց արտասուք գնում էին... Ախ,
այդ ինչու երազ էր»: Այնուհետև նա իր արմունկը դնում է լուսամտի
վրայ, զլուխը կրթնում ձեռքին և մի պահ մնում է այդպէս անշարժ և լուռ,
մինչև որ մտնում է Պետրոսը:

Տ Ե Ս Ի Ա.

Մագդա և Պետրոս

ՄԱԳ.—Պետրոս, Նինային յայտնեցիր:

ՊԵՏ.—Էս բոպէիս կը դայ: (Կամենում է զնալ):

ՄԱԳ.—Պետրոս, դու վերջապէս չասացիր, թէ ով է պատ-
ռել լուսանկարը:

ՊԵՏ.—Օրիորդ, չեմ համարձակվում:

ՄԱԳ.—Ինչ շատ լաւ յայտնի է, թէ ով է արել: Միայն
ուզում եմ, որ դու ես հաստատես իմ կասկածը:

ՊԵՏ.—Օրիորդ, ում որ կասկածում ես, հէնց նա է:

ՄԱԳ.—Խախտում եմ:

ՊԵՏ.—Էլ ով կարող էր այդպէս անխիղճ բան անել:

ՄԱԳ.—Աչքովդ տեսար:

ՊԵՏ.—Ես քեզ սուտ բան կասեմ: Երբ նա ալբոսից հանեց
պատկերը ու սկսեց էսպէս կտոր կտոր անել, օրիորդ, ճշ-
մարիտ խօսք եմ ասում, հէնց իմացայ, թէ իմ մօրս պատ-
կերն է: Էդ բոպէին մտածում էի. Տէր Աստուած, էսքան չա-
րութիւն մի կնկայ մէջ: Խնդրում եմ, օրիորդ, ոչ ոքի չասէք:
Եթէ խանութի աղանջը ընկաւ, բանս պրծած է:

ՄԱԳ.—Պետրոս, ես շատ շնորհակալ եմ, որ ոչինչ չթազ-
ցրիր: Իսկ դու հանգիստ կաց: Ոչ ոքի չեմ ասի: (Մտնում
է. մտնում է Նիկան):

Տ Ե Ս Ի Լ Գ.

Մագդա և Նիմա

ՆԻՆ.—Մագդա, ինձ ինչո՞ւ կանչեցիր:

ՄԱԳ.—Նիմա ջան, մի բան պիտի խնդրեմ:

ՆԻՆ.—Ի՞նչ բան:

ՄԱԳ.—Այս երեկոյ մերոնք գնում են հարսանիք, ես մի-
նակ եմ մնում: Խնդրում եմ, արժի՞ ինձ մօտ: Մենակ կը վախի-
նամ:

ՆԻՆ.—Ուրախութեամբ: Բայց դասերս դեռ չեմ սովորել:

ՄԱԳ.—Մերոնք դեռ պատրաստվում են: Կարող ես գնալ,
և դասերդ սովորել:

ՆԻՆ.—Ուրեմն շտապեմ: (Կամենում է գնալ, բայց մի բան
յիշելով՝ յետ է գալիս): Իսկ գիշերը մենակ պիտի մնաս:

ՄԱԳ.—Գիշերը մօրաքրոյս ախտից կը լինի:

ՆԻՆ.—Իսկ դու ինչո՞ւ չես գնում հարսանիք:

ՄԱԳ.—Ես ինքս չեմ ուզում:

ՆԻՆ.—Ինչո՞ւ:

ՄԱԳ.—Անտեղ ես քոլորովին օտար և մենակ կը զգամ
ինձ:

ՆԻՆ.—Մագդա, կուզե՞ս Ռուբէնին էլ հետս բերեմ:

ՄԱԳ.—Շատ ուրախ կը լինեմ: Թող ջութակն էլ բերի:

ՆԻՆ.—Ուրախ ժամանակ կանց կացնենք: Ռուբէնը կը
հուազէ, մենք կերգենք: (Նիման գնում է: Մտնում է Զումշուղը
միլետով եւ կանգնելով հայելու առաջ՝ սկսում է կապել փող-
կապը):

Տ Ե Ս Ի Լ Գ.

Զումշուղ և Մագդա

ԶՈՒՄ.—Մագդա, դեռ է՞դ հալին մօ. ինչո՞ւ չես հագնվում:

ՄԱԳ.—Ես չեմ գալու:

ԶՈՒՄ.—Ո՞նց թէ չես գալու: Դու. չգիտե՞իր, որ էսօր մօրդ
հօրանց տանը հարսանիք կայ:

ՄԱԳ.—Գիտէի:

ԶՈՒՄ.—Հապա ինչո՞ւ չես հագնվում:

ՄԱԳ.—Շոր չունեմ:

ԶՈՒՄ.—Շոր չունե՞ս: Գիմազիայի գէրիան չի՞ լինի:

ՄԱԳ.—Հնացել է: Անյարմար է հարսանիքում հագնել:

ԶՈՒՄ.—(Շոտարած). Վա՛, էս լաւ չեղաւ: Ի՞նչպէս անենք:

Ապա մի կանչեմ մօրդ: Հեղճա՛:

ՀԵՂ.—(Ներսից). «Ի՞նչ ես ուզում»:

ԶՈՒՄ.—Մի բօպէով: (Մտնում է Հեղինէն, Մագդան հե-
ռանում է):

Տ Ե Ս Ի Լ Գ.

Զումշուղ և Հեղինէ

ԶՈՒՄ.—Հեղուշ ջան, Մագդան չի գալիս:

ՀԵՂ.—Թող չգայ: Դրա համար էլ գարդ անե՞մ:

ԶՈՒՄ.—Ձէ՛, դու բանի էութիւնը չես իմանում: Դէրիա
չունի, դրա համար չի գալիս:

ՀԵՂ.—Ե՞ս եմ մեղաւոր, որ դէրիա չունի: Դու հայրն ես,
ինչո՞ւ վաղօրօք կարել չես տուել:

ԶՈՒՄ.—Ո՞վ է ինձ բան ասել: Է՞դ տեսակ բաների դու
պիտի հետեւես, Հեղուշ ջան:

ՀԵՂ.—Իմ թնչ գործն է. դու գիտես քո աղջիկը:

ԶՈՒՄ.—Հապա թնչ անենք, որ նա էլ գայ:

ՀԵՂ.—Ես թնչ իմանամ:

ԶՈՒՄ.—Էնքան դէրիաներ ունես. մէկն էլ նրա վրայ չի
գայ:

ՀԵՂ.—(Ծիծաղ). Իմ դէրիան. Օրինակ ես ուզում դառնալ:

ԶՈՒՄ.—Բայց եթէ նրան չտանենք, մենակ կը մնայ:

ՀԵՂ.—Ես թնչ անեմ, որ մենակ կը մնայ:

ԶՈՒՄ.—Ուրեմն պէտք է մօրաքրոջը կանչել, որ գիշերը
էստեղ մնայ:

ՀԵՂ.—Ուզում ես դայ սաղ գիշերը աղջկադ գլխին աւե-
տարան կարգայ...

ԶՈՒՄ.—Ի՞նչ արած: Ուրիշ հնար չկայ:

ՀԵՂ.—Ի՞նչ որ անելու ես, շուտ արա, թէ չէ կուշանանք:

ԶՈՒՄ.—Հա, Պետրոսին զրկեմ Սօնա բաջու ետեից:

ՀԵՂ.—Ի՞նչ դրա ժամանակն է: Թող առաջ ֆայտօն բերի:

ԶՈՒՄ.—Ձէ՛, մօրաքրոջը կարող է ուշանալ, իսկ Մագդան
մենակ կը մնայ:

ՀԵՂ.—Ոչ, անկարելի է: Թող առաջ կառքը բերի:

ԶՈՒՄ.—Դէ՛ լաւ, քո ասածը լինի: (Զանգ): Պետրոս, մի
ֆայտօն բեր:

ՀԵՂ.—Ասա՛ լաւ ֆայտօն բերի:

ԶՈՒՄ.—Լաւ ֆայտօն կը բերես:

ՀԵՂ.—(Հայելու առաջ զուգվում է): Զումշուղ, դու պատ-
րաստ ես, թէ չէ:

ԶՈՒՄ.—Մնում է միայն վերարկուս:

ՀԵՂ.—Ես էլ պատրաստ եմ: Հա՛, մոռացայ բուֆէտը փա-
կել: (Ուզում է գնալ):

ՁՈՒՄ.—Ինչ հարկաւոր է, Հեղուշ: Մագդան հօ տանն է
մնում:

Հեղ.—Դա իմ գործն է: Տան բաների մէջ դու մի խառ-
նուիր:

ՁՈՒՄ.—Դէ որ քո բանն է, կողպիր: Բայց ընթրիքի հա-
մար ամեն բան կը դնես: Զակուսկեղէն, գինի: Մօրաքոյրը էս-
տեղ է լինելու:

Հեղ.—Ամեն բան զրուած է: (Գնում է):

(Պետրոսը յայտնում է, որ Ֆայտօնը պատրաստ է):

ՁՈՒՄ.—Մագդա:

Տ Ե Ս Ի Լ Ե.

Ջումօնդ, Հեղինէ, Մագդա եւ Պետրոս

ՁՈՒՄ.—Մագդա, մենք գնում ենք: Հիմա Պետրոսը պիտի
գնայ մօրաքրոջ կանչի, որ գիշերը քեզ մօտ մնայ: Մեզ չսպա-
սէք: Ընթրիքի համար ամեն բան զրուած է սեղանատանը:
Դռները լաւ կողպած կը պահէք: Մարդ չթողնէք ներս մտնի,
ով որ էլ լինի: Պետրոս, դու էլ տանը մուղիաթ կաց, օյեաղ
կաց:

(Հեղինէն գալիս է, հանգցնում է լամպը եւ վառում է եր-
կու մօմ, որից սենեակը բաւականին մթնում է: Դրսի խառնուր
գիշերը մերթ Եւրթ մերթ լուսաւորվում է կայծակից եւ լսելի են
լինում սկզբում խուլ որոտներ):

ՁՈՒՄ.—Պետրոս, վերարկուները բեր: (Պետրոսը նախա-
սենեակից բերում է վերարկուները եւ պահում է հալնելու, նախ
տիկնօցը եւ յետոյ Զումշուդին: Հեղինէն գլխին կապում է լայն
մետաքսեայ քաշկինակ):

ՁՈՒՄ.—Արդէն անձրեւը սկսեց: Պետրոս, ֆայտօնի գլուխը
ծածկումս է:

ՊԵՏ.—Ծածկուած է, աղա: (Գնում են):

ՄԱԳ.—Պետրոս, մօրաքրոջն շուտ հասցրո՛ւ:

ՊԵՏ.—Ծախ պէս կը թռչեմ: (Գնում է):

Տ Ե Ս Ի Լ Զ.

Մագդա (մենակ)

Մագդան մնում է մենակ ամբողջ բնակարանում, պատու-
հանից նայում է դէպի դուրս: Սակայն այնտեղ թագաւորում է
անվերջանելի խաւար, տեղում է յորդ անձրեւ եւ լսելի են գրե-
թէ անընդհատ որոտումներ: Ահեղ փոթորիկը մի կողմից, եւ
միայնակութիւնը միւս կողմից զգայուն, թոյլ էակի շուրջը

ստեղծում են խորհրդաւոր եւ ահուկի մթնոլորտ, իսկ նրա հո-
գում ահ ու դող, սարսուռ: Սկզբում Մագդան ճիգ է թափում
մաքաւել իր ամբողջ էութեանը տիրապետող զգացման՝ սար-
սափին, որի համար նա դիմում է զանազան միջոցների: Կայ-
ծակի փայլը եւ ամպերի ճայթիւնները ամեն անգամ ստիպում
են նրան ճիշեր արձակել: Փորձում է կարգալ, բայց իսկոյն
գիւրքը նետում է մի կողմ, կամ ընկնելով բազկաթոռի մէջ՝
աչքերը ծածկում է ձեռքերով, որպէս զի կայծակի փայլը չը
տեսնի: Շնչառութիւնը գնալով ծանրանում է, այնպէս որ լսե-
լի է բաւական հեռու տեղից: Կայծակի եւ որոտման աճելու
չափով աճում է եւ սարսուռը Մագդայի հոգում: Նա չէ խօսում,
միայն հրբեմն լսվում են բացազանչութիւններ. «այ, կայծակը...»:
Նրա հոգեկան ելեէջներին պիտի համապատասխանեն դիմա-
խաղը եւ շարժումները: Վերջին վայրկեաններում, երբ Մագ-
դայի ոյժերը սպառուած են, ականջները լցվում են խուլ հըն-
չիւններով, աչքերը սեւանում, եւ գլուխը սկսում է պտտուել:
Այդ բոլոր հոգեկան սասանումների հետեանքը լինում է ուշա-
թափութիւն: Խորին լուռութեան մէջ այժմ լսելի է հողմի շա-
ռաչիւնը: Կայծակը երբեմն փայլատակում է, իսկ որոտումները
գնալով թուլանում են:

Մանում են Նինան եւ Ռուբէնը: Նինան տեսնելով Մագ-
դային յատակի վրայ փռուած՝ սարսափելի ճիւղ է արձակում:
Ռուբէնը կռնում է եւ լսում Մագդայի շնչառութիւնը, շօշա-
փում է զարկերակը եւ, համոզուելով որ Մագդանը կենդանի է,
փոքր ինչ հանգստանում է, հանգստացնում է եւ քրոջը:

Տ Ե Ս Ի Լ Է.

Ռուբէն, Նինա եւ Մագդա

ՆԻՆ.—Ռուբէն, բժիշկ կանչենք:

ՌՈՒԲ.—Ոչինչ չկայ: Ուշքից գնացել է: Դու միայն ջուր
հասցրո՛ւ:

ՆԻՆԱ.—(Բերում է գրաֆինը):

ՌՈՒԲ.—Աձա, (Նինան ածում է, Ռուբէնը սրսկում է
Մագդայի ճակատին, երեսին, եւ շփում է):

ՆԻՆ.—Ռուբէն, ուշքի կը գոյ:

ՌՈՒԲ.—Համբերութիւն ունեցիր: Աձա:

ՆԻՆ.—Ռուբէն, կարծես կողերը շարժվում են:

ՌՈՒԲ.—Այո, շարժվում են: Աչքերը իսկոյն բաց կանի,
պէտք է դարձեալ շփել:

ՆԻՆ.—Ռուբէն, աչքը բաց արեց: Ինչ ուրախ եմ... Մագ-
դա ջան...

ՌՈՒԲ.—Մի խօսիր, դեռ լաւ ուշքի չի եկել:

ՆԻՆ.—Արդէն ուշքի եկաւ: Մագդա ջան, հոգեակս, ինչպէս ես զգում: Այստեղ ենք:

ՌՈՒԲ.—Օրիորդ Մագդա: Մենք այստեղ ենք: (Մագդան րայլ է, բայց աշխատում է նստել: Նրան օգնում են: Նա անգիտակցաբար նայում է մերք Ռուբէնին, մերք Նինային: Այդ միջոցին մտնում է Սօնան եւ, տեսնելով Մագդային այդպիսի դրութեան մէջ, շտապում է նրան իր գիրկը տանել):

Տ Ե Ս Ի Լ Ը.

Նրանք եւ Սօնա

ՍՕՆ.—Իմ Մագդա:

ՌՈՒԲ.—Դեռ լաւ ուշքի չէ եկել: Ուշաթափուել էր: (Մագդան կարծես պահանջ է զգում քնելու):

ՍՕՆ.—Մագդա ջան, ինձ չէս ճանաչում:

ՌՈՒԲ.—Մայրիկ, մի խօսեցնէք: Ուզում է քնել:

ՍՕՆ.—Տանհնք ննջարան: (Սօնան բարձրացնում է Մագդային):

ՌՈՒԲ.—Նինա, դու էլ օգնիր: (Ինքն էլ օգնում է: Մագդային տանում են ննջարան: Քիչ յետոյ գալիս է Ռուբէնը, կպցնում է ծխախոտը եւ սկսում է անց ու դարձ անել): Ինչպէս երևում է, սաստիկ վախեցել է:

Տ Ե Ս Ի Լ Թ.

Ռուբէն եւ Նինա

ՆԻՆ.—Ա՛խ, ինչպէս խղճում եմ Մագդային:

ՌՈՒԲ.—Քնեց:

ՆԻՆ.—Այո: Իսկոյն:

ՌՈՒԲ.—Ոչինչ չսասց:

ՆԻՆ.—Բոլորովին: Ռուբէն, ինչից կը լինի ուշաթափուած:

ՌՈՒԲ.—Անշուշտ սաստիկ վախից:

ՆԻՆ.—Վախից կարելի է ուշաթափուել:

ՌՈՒԲ.—Վախից կարելի է մինչեւ անգամ մեռնել:

(Գալիս է Սօնան):

Տ Ե Ս Ի Լ Ժ.

Սօնա, Ռուբէն եւ Նինա

ՍՕՆ.—Տէր Աստուած, Էսպէս էլ անխիղճ մարդիկ կը լինեն: Խեղճ եթէմին մէջ մենակ թողնում են տանը, իրանք

գնում են իրանց քէֆին, ուրախութեան:

ՌՈՒԲ.—Նրանց արածը կատարեալ բարբարոսութիւն է:

ՆԻՆ.—Ես լսել էի խորթ մայր, բայց չէի տեսել:

ՍՕՆ.—Մարդ ճար ու ճշգր մի աղջիկ ունենայ, ու Էսպէս անտէր անտիրական թողնի, Աստուած վեր կառնի:

ՆԻՆ.—Ի՜նչ լաւ եղաւ, որ մենք շուտ հասանք:

ՍՕՆ.—Ձեզ Աստուած հասցրեց, որդիք, թէ չէ:

ՆԻՆԱ.—Մայրիկ, երբ Մագդային տեսայ գիտնին փռուած, դողս բռնեց, կարծեցի՝ մեռած է:

ՌՈՒԲ.—Այնպէս ճշաց, որ ինձ էլ վախեցրեց:

ՍՕՆ.—Ձէ, այսուհետեւ էլ Մագդային անկարելի է էստեղ թողնել:

ՌՈՒԲ.—Վաղուց հարկաւոր էր նրան հեռացնել այդ բըռնակալներից:

ՍՕՆ.—Ձումշուղը լաւ մարդ է, նրան փչացնողը էն անըղդաֆն է:

ՌՈՒԲ.—Սարսափելի կին է, մինչեւ անգամ անբարոյական:

ՍՕՆ.—Դու է՞լ ես բան իմացել, որդիս:

ՌՈՒԲ.—Դրանց պատմութեանը ես լաւ տեղեակ եմ:

ՍՕՆ.—Նինա ջան, ցաւդ տանեմ, դուան մօտից մի աչք ածա, տես Մագդան քնած է թէ արթուն է: (Նինան զննում է):

Տ Ե Ս Ի Լ ԻԱ.

Սօնա եւ Ռուբէն

ՍՕՆԱ.—Որդիս, ապա ասա, ի՜նչ գիտես Հելէնի մասին:

ՌՈՒԲ.—Մայրիկ, դա երկար պատմութիւն է: Միայն այսքանը կասեմ, ճիշտ է այն բոլորը, ինչ որ խօսում են նրանց մասին: Նրա սիրականը Վանօ անուշով մի երիտասարդ է:

ՍՕՆ.—Աստուած դրան զրկել է Ձումշուղին պատժելու համար: Մարդ էլ էնքան գերի կը դառնայ աննամուս կնկայ ձեռին և նրա խաթրու իր գեօղալ, հրեշտակ աղջկան աչքից կը քցի: Տեղն է դրան, տեղն է Ձումշուղին:

ՌՈՒԲ.—Ես մինչեւ այժմ խնայում էի Մագդայի հօր պատիւը, բայց տեսնում եմ, որ նա դրան արժանի չէ, որովհետեւ իր ամուսնու հետ միացած՝ երկու հոգեհանձնորի պէս սևացնում են խեղճ աղջկայ կեանքը: Այսուհետեւ էլ գաղտնիք չկայ: Աշխարհի առաջին պիտի մերկացնեմ այդ կնոջ բոլոր արարքները: (Նինան գալիս է):

Տ Ե Ս Ի Լ ԺՅ.

Սօնա, Ռուբին, Նիկա եւ յետս Մագդա

ՍՕՆ. — Բնած է:

ՆԻՆ. — Ես որ գնացի, դեռ ընած էր: Այժմ վեր կացաւ: (Սօնան ուզում է գնալ, Մագդան երեւում է դռան մէջ անաբել եւ գունատ):

ՄԱԳ. — Դուք այստեղ էք... Այժմ հանգստացայ... (Սօնան գրկած բերում է Մագդային եւ նստեցնում զահաւարակի վրայ):

ՍՕՆ. — (Սեղմելով կրծքին): Հիմա լուս ես, Մագդա ջան:

ՄԱԳ. — Ես կարծեցի՝ դարձեալ մենակ եմ:

ՆԻՆ. — Մագդա, մենք էլ այստեղ ենք:

ՄԱԳ. — (Աջքերը յառած է մի կետի վրայ: Այժմ նրա դեմքը սկսում է պայծառանալ):

ՍՕՆԱ. — Ի՞նչ բանի ես էդպէս պինդ նայում:

ՄԱԳ. — Այնտեղ քիչ առաջ իմ մայրիկիս տեսայ:

ՍՕՆԱ. — Ի՞նչպէս: Մայրիկիդ տեսար:

ՄԱԳ. — Ձիւնի պէս սպիտակ... Լոյսից համարեա չէր զահաղանվում: Այնպէս տխուր էր, լուս լաց էր լինում... Այնպէս կարօտով ուզեցի նրա գիրկը ընկնել, յանկարծ մայրիկս անյայտացաւ: (Լալագին): Ախ, մամա ջան, երանի ամեն օր երեսն աչքիս, գոնէ հեռուից տեսնեմ քեզ ու սրտիս կարօտն առնեմ:

ՍՕՆ. — (Սեղմելով կրծքին): Էնպէս իմացիր, որ ես քո մէրն եմ, ես քո ցաւդ տանեմ, մի լար, մի լար:

ՄԱԳ. — (Փաքունելով): Մամա ջան, մամա ջան, մամա ջան:

Վ Ե Ր Ե Գ Ո Յ Բ

Գ Ո Ր Ծ Ո Ղ Ո Ւ Թ Ի Ի Ն 2 Ո Ր Ր Ո Ր Դ

Մագդայի մօրաբոլջ ընակարանում: Միջակ, հասարակ, բայց մաքուր կահաւորում: Երկու դուռ՝ մէկը ճակատին, միւսը աջ կողմում: Կարասիքները հասարակ. քառակուսի սեղան իր ծածկոցով, սեղանի վրայ շամդաններ մոմերով: Պատի մօտ դրուած է տախտ իր նախշուն մուխքաներով եւ բարձերով: Նրա առջև սեղան՝ լամպայով, աթոռներ, և ուրիշ մի քանի անհրաժեշտ իրեր: Ահա համեստ աշխատաւորի տան անշուք կահաւորութիւնը:

Մագդան նստած է սեղանի մօտ և դիտում է մի լուսանկար, որ շրջանակի մէջ դրուած է սեղանի վրայ: Նրա մօրաբոլջը նստած է տախտի վրայ և գուլպա է գործում:

Փոթորկալից գիշերուայ հետեւալ օրը: Դուրսը հրաշալի եղանակ: Օրը թեքվում է դէպի վերջալոյս:

Տ Ե Ս Ի Լ Ա.

Սօնա եւ Մագդա

ՄԱԳ. — Մօքիր ջան...

ՍՕՆ. — Ասա, հոգիս:

ՄԱԳ. — Մի բան եմ ուզում խնդրել:

ՍՕՆ. — Ի՞նչ բան:

ՄԱԳ. — Ձե՛ք կարելի մայրիկի այս լուսանկարից նորը հանել տալ:

ՍՕՆ. — Մագդա, դու հօ դրանից ունես:

ՄԱԳ. — Այո, ունէի: Բայց տես ինչ օրն են գցել: (Յոյց է տալիս պատկերի կտորտանքը):

ՍՕՆ. — Հոգը գլխիս... ես գիտեմ սա ում բանն է. էն չար սատանայի:

ՄԱԳ. — Ձեա սխալվում, մօքիր, միայն նա է ընդունակ այսպիսի յանցանք գործելու:

ՍՕՆ. — Չորանան նրա ձեռքերը, որ էս հրեշտակի պատկերը էս օրը չգցեր:

ՄԱԳ. — Մօքիր, գիտե՞ս նա ինչ նպատակով է այս բանը արել: Որ իմ սիրտը դադի, որովհետեւ նա շատ լաւ գիտէր, թէ ես ինչպէս պաշտում եմ այս պատկերը: Նա ուզեց ինձ զրկել իմ մօր յիշատակից և իմ միակ մխիթարութիւնից:

ՍՕՆ. — Նա չի կարող քեզ զրկել մօրդ յիշատակից: Նորը հանել կը տանք:

ՄԱԳ. — Ինչքան շնորհակալ կը լինեմ քեզանից, հէնց կիմանամ՝ մայրիկիս կենդանացրիր:

ՍՕՆ. — Միամիտ կաց, էսօր եեթ կը գնանք պատկերհանի մօտ: (Դուռը բաղխում են: Մագդան «հայրիկս» ասելով անցնում է միւս սենեակը, բայց դա Պետրոսն էր):

Տ Ե Ս Ի Լ Բ.

Սօնա եւ Պետրոս

ՍՕՆ.—Ի՞նչ խաբար ես բերել, Պետրոս:

ՊԵՏ.—Լաւ խաբար չի, Սօնա-բաջի: Ձեզանից յետոյ Ձումշուղ աղէն եկաւ շատ գաղազած. լաւ է, որ արբած էր. մի քիչ զամաղալ արեց խանութի հետ ու պառկեց քնեց: Երկար քնած էր, հէնչ նոր վեր կացաւ, կանչեց ինձ ու հարցրեց Մագդայի մասին: Ես ասացի, թէ Սօնա-բաջին նրան տարաւ իրանց տուն: Ձումշուղ աղէն ընենց գողաց վրաս, որ ես սասանուեցի: Ինչո՞ւ, ասում է, առանց ինձ հարցնելու՝ թողել ես տանի: Ասելն ու դնելն շրխկացնելը մէկ եղաւ:

ՍՕՆ.—Յետոյ:

ՊԵՏ.—Յետոյ ինձ զրկեց քեզ մօտ, որ Մագդային տուն տանեմ:

ՍՕՆ.—Դու էլ կը գնաս, իմ կողմից կասես աղա Ձումշուղին, որ սրանից ետ նա Մագդա անունով աղջիկ չունի: Կասես՝ այսուհետեւ Մագդան պիտի ապրի իր մօրաքրոջ տանը: Հասկացար:

ՊԵՏ.—Սօնա-բաջի, էդպէս էլ կասեմ, թէպէտ գիտեմ, որ էս անգամ ապտակի տեղ զազանակ պիտի ուտեմ: (Գնում է):

Տ Ե Ս Ի Լ Գ.

Սօնա եւ Մագդա

ՄԱԳ.—Ինչո՞ւ էր եկել Պետրոսը:

ՍՕՆ.—Հէրդ էր զրկել քո ետեից:

ՄԱԳ.—Դու ի՞նչ պատասխանեցիր:

ՍՕՆ.—Ասացի, որ Ձումշուղը էլ Մագդա անունով աղջիկ չունի:

ՄԱԳ.—Հայրիկը սաստիկ բարկանալու է, և ինքը կը գայ իր ոտով:

ՍՕՆ.—Ես էլ ուզում եմ որ գայ:

ՄԱԳ.—Նա կը գայ և ինձ գօռով կը տանի:

ՍՕՆ.—Ես չեմ թողնի:

ՄԱԳ.—Ծեծելով կը տանի:

ՍՕՆ.—Թո՛ղ մի համարձակուի... նրա անունը և պատիւը հիմա իմ ձեռքումն է:

ՄԱԳ.—Նա ոչ մի կերպ չի համաձայնուի, որ ես մնամ քեզ մօտ:

ՍՕՆ.—Մագդա ջան, դու միայն քո համաձայնութիւնը յայտնիր, մնացածը հեշտ է: Կուզե՞ս այսուհետեւ մեր տանը ապրել և մեզ հետ աղքատութիւն քաշել: Մեր գրութիւնը քեզ

յայտնի է: Իմ մարդու և որդու դատածը օրն ուտում ենք. բայց, փառք Ստեղծողին, «քաղցած չենք մնում». էս նրա համար եմ ասում, որ վերջումը չփոշմանես ու չասես, թէ քեզ զրկեցին հօրանցդ տան վայելքներից և տարան ցամաք հացի կապեցին:

ՄԱԳ.—Այդ ի՞նչ ես ասում, մօքիւր ջան, մի՞թէ ես յիմար եմ, որ այդպիսի բան մտածեմ: Ի՞նչ եմ անում հօրանցս տան առատութիւնը, կերակուրները, տեսակ տեսակ մուրաբէքը, ի՞նչ եմ անում ապրեշուծի վերմակները, երբ որ սիրտս միշտ տխուր է, արտասուքս չի ցամաքում և ամբողջ տանը ես մեռնակ եմ ու հալածուած:

ՍՕՆ.—Մագդա ջան, դու արժանի էիր աւելի բախտաւոր կեանքի: Հիմա դու կը մնաս մեզ մօտ ու կը մասնակցես մեր չարքաշ կեանքին: Եթէ մեր տանը ուրիշ բան չգտնես, գոնէ սիրտդ հանգիստ կը լինի: Ես էլ քեզ կը սիրեմ մօրդ պէս, ոչ ոք քեզ ցուրտ խօսք չի ասի: Եթէ Աստուած աջողեց, ես քո ուսման մասին էլ կը հոգամ:

ՄԱԳ.—Մօքիւր ջան, ինչքան շնորհակալ կը լինեմ քեզանից: (Մտնում է Նիման իր եղբօր հետ):

Տ Ե Ս Ի Լ Դ.

Սօնա, Մագդա, Նիմա եւ Ռուբէն

(Նիման Մագդայի հետ համբուրվում է):

ՌՈՒԲ.—Տեսնում է՞ք, մայրիկ, մէկն առանց միւսի մի օր էլ չկարողացաւ ապրել:

ՍՕՆ.—Դրանք որ կան, աղանիւներ են:

ՆԻՆ.— Մայրիկ, հիմա Մագդան ձեզ մօտ պիտի ապրի:

ՍՕՆ.—Այո, մեզ մօտ: Թէև ձեզանից մի քիչ հեռու ենք, բայց էլի միշտ կարող ենք իրար հետ տեսնուել: Իմ տան գոնեքը բաց են ձեր առաջ: Նստեցէ՛ք, որդիքս, խօսեցէ՛ք, զրոյց արէ՛ք: Ես ձեզ չեմ խանգարի: (Գնում է):

Տ Ե Ս Ի Լ Ե.

Նրանք՝ առանց Սօնայի

ՆԻՆ.—Մագդա, գիտե՞ս ինչի համար ենք եկել. որպէս զի գնանք զրօսնելու:

ՌՈՒԲ.—Դուք, ի հարկէ, կընկերանաք մեզ:

ՄԱԳ.—Շատ կուզէի ձեզ հետ զրօսնել. բայց դժբախտաբար չեմ կարող:

ՆԻՆ.—Ինչո՞ւ, Մագդա:

ՄԱԳ.—Անյարմար է: Հայրս եթէ իմանայ, կարող է կարծել, որ ես հէնց նրա համար իմ տանից հեռացել, որ ինձ ըզգամ բոլորովին աղատ:

ՆԻՆ.—Իմ կարծիքով, եթէ ծնողներդ քեզ հետ այդպէս վատ են վարվում, չարժէ ուշադրութիւն դարձնել նրանց վրայ: ՄԱԳ.—Պարոն Ռուբէն, ես կուզէի իմանալ ձեր կարծիքը: Արդեօք դուք անյարմար չէ՞ք գտնում, եթէ հայրական տնից հեռանալու նոյն իսկ առաջին օրը ինձ տեսնեն բուլվարում:

ՌՈՒԲ.—Սկզբում, երբ առաջարկեցի ձեզ գալ մեզ հետ զբօսանքի, իսկն ասած, խոր չէի մտածել: Այժմ, ձեր բացատրութիւնից յետոյ, ես ևս անյարմար եմ գտնում և համաձայն եմ ձեզ հետ:

ՆԻՆ.—Ուրեմն մենք գնանք: (Կամենում են գնալ, մտնում են Սօնան):

Տ Ե Ս Ի Լ Զ.

Սօնա, Մագդա, Նինա և Ռուբէն

ՍՕՆ.—Ինչո՞ւ էք շտապում: Մի բաժակ թէյ խմեցէք, յետոյ:

ՌՈՒԲ.—Շնորհակալ եմ, մայրիկ:

ՍՕՆ.—Լայեզ չէ՞ք անում:

ՌՈՒԲ.—Օ՛, ի՞նչ էք ասում:

ՆԻՆ.—Մի ուրիշ անգամ:

ՌՈՒԲ.—Տեսնում եք, մայրիկ, ի՞նչ հրաշալի օր է: Այսպիսի եղանակին տանը նստելը մեղք է:

ՍՕՆ.—Դուք գիտէք, որդիք: Ես ձեզ չեմ ստիպում: (Ռուբենը եւ քայքայ հրաժեշտ տալով գնում են: Մագդան նրանց ճանապարհ է դնում: Մտնում է Զուլմուդը գլխարկով, վերարկուով եւ գաւազանը ձեռքին: Դեմքը խիստ դաժան):

Տ Ե Ս Ի Լ Է.

Սօնա և Զուլմուդ

ՍՕՆ.—Բարով եկար, փեսայ: Համեցէ՛ք:

ԶՈՒՄ.—Հը՛, ի՞նչ անուն տամ քո արարմունքին:

ՍՕՆ.—Իմ արարմունքը քեզ դուր չի գալիս, բայց Աստուծուն հաճելի է:

ԶՈՒՄ.—Ինձ ասան տեսնեմ, ես Մագդայի հէ՛րն եմ թէ մի օտար մարդ: Աղջկաս ձեռքից բռնած տանում ես տունդ ու մի չես էլ հարցնում՝ դարձել եմ թէ ոչ:

ՍՕՆ.—Ո՞վ է մեղաւորը: Կէսօր էր դառել, հարսանքատնից դեռ չէիք եկել: Շատ սպասեցի, չեկաք. ես էլ իմ տուն ու տեղն ունեմ, իմ դարդն ու ցաւն ունեմ. վեր կացայ եկայ: Մագդային էլ չուզեցի ձեզ պէս մանակ թողնել ու հետս բերի:

ԶՈՒՄ.—Թէ ուզում էիք տուն գնալ, ճամբադ բաց էր առաջիդ, քեզ ո՞վ խանգարեց: Ինչո՞ւ Մագդային էլ հետդ քաշ տուիր:

ՍՕՆ.—Մօրաքոյրը իրաւունք չունի իր քրոջ աղջկան իր

մօտ տանել: Դա ի՞նչ մեծ յանցանք է: Յանցանքը ձեր արածն է: Ինչո՞ւ խեղճ եթիմին թողնում էք տանը մենակ և ինքներդ դնում էք հարսանիք: Դա խղճմտմի՞ք է, քեզ եմ հարցնում: Եւ ի՞նչ էր պատճառը, որ խեղճ աղջկան հարսանիքից զրկեցիք: Դէրիա չունէ՞ր ինչքան ամօթ բան է ծնողներին համար, եթէ իրանց աղջիկը մնում է տանը, կարգին դէրիա չունենալու պատճառով: Ձեր մի ուրիշ սխալն էլ էն է, որ ծառային փոխանակ առաջ իմ ետեից ուղարկելու, որ շուտ գամ, ուղարկում էք ֆայտօնի ետեից: Կարծես հարսանիքը փախչում էր:

ԶՈՒՄ.—Լաւ, դրանից ո՞ւմ ի՞նչ փաստ եղաւ:

ՍՕՆ.—Ա՛, հիմա կասեմ, թէ ո՞ւմ ի՞նչ փաստ եղաւ: Հիշո՞ւ բան ես կարծում ջահել աղջկայ համար մէն-մենակ մնալ ահագին տան մէջ, էն էլ խաւար գիշերով, երբ դուքսը աշխարհը ալեկոծվում էր: Եթէ հարեանները մի քիչ ուշ հասնէին և խեղճ աղջիկը անից սրտապատառ լինէր, դու ի՞նչ պատասխան պիտի տայիր քո խղճի առաջ և Աստուծոյ դատաստանի առաջ:

ԶՈՒՄ.—Փառք Աստուծոյ, հօ բան չի պատահել:

ՍՕՆ.—Խեղճը մահից պրծաւ, ասում ես ի՞նչ պատահեց:

ԶՈՒՄ.—Ո՛նց թէ մահից պրծաւ:

ՍՕՆ.—Երբ ես եկայ, էն քանդախտը մեռելի պէս ընկած էր յատակի վրայ: Հարեանները ինձանից առաջ էին եկել, Աստուած էր նրանց հասցրել: Զուր ածելով երեսին ու ճակտին, մարմինը արորելով ուշքի էին բերել աղջկադ:

ԶՈՒՄ.—Ինչո՞ւ էք ուշաթափուել:

ՍՕՆ.—Չարմանում ես: Ամպերի գոգոտոցը, կայծակները, մենակութիւնը, վախը բաւական չէին, որ նա ուշքից գնար: Դեռ ուրախ կաց, որ սիրտը չի ճաքել: Հիմա տեսնում ես, որ պատճառը դու ես և քո կնիկը, որ Մագդային թողնել էիք մենակ և ծառային ուշ էիք ուղարկել իմ ետեից: Իմացիք, որ եթէ մենք ուշանայինք, աղջկադ դաճաղը պատրաստ էր:

ԶՈՒՄ.—Հիմա ո՞նց է:

ՍՕՆ.—Փառք Աստուծոյ, որ մեզ խնայեց:

ԶՈՒՄ.—Կանչիր էստեղ:

ՍՕՆ.—Ուզում ես տանել տուն, որ էլի նահատակես: Ո՛չ, ես չեմ թողնի: Այսուհետև նա իմ տանս պիտի ապրի: Մագդան հիմա իմ աղջիկն է, ոչ մէկ ունի, ոչ հէք:

ԶՈՒՄ.—Բաս անտէ՞ր է:

ՍՕՆ.—Ի հարկէ անտէր է, և անտէրին տիրութիւն անող է պէտք:

ԶՈՒՄ.—Այո, պէտք է, եթէ ես մեռած լինեմ: Փառք Աստուծու, ես դեռ կենդանի եմ և աղջկանիցս ձեռք չեմ վերցրել: Ո՞վ իրաւունք ունի իմ աղջկայ վրայ: Ուզենամ՝ կը նահատակեմ, ուզենամ՝ կենդանի կը թողնեմ:

ՍՕՆ.—Դու էդ իրաւունքը չունես: Հիմա օրէնք և դատաստան կայ:

ՁՈՒՄ.—Դրանով ի՞նչ ես ուզում ինձ ասել: Վախեցնում ես: Էս բօլէիս կանչիր, թէ չէ ինքս կը գնամ և ծամերիցը բռնած քաշ տալով կը բերեմ:

ՍՕՆ.—Մագդա, արի, հէրդ կանչում է: (Մագդան մտնում է վախեցած):

Տ Ե Ս Ի Լ Ը.

Ջումբուդ, Սօնա և Մագդա

ՁՈՒՄ.—Աղջի, ռւբ ես կորել սաղ օրը: Ի՞նչպէս ես համարձակուել հայրական տնից փախչել... Դու չես ամաչում, աննամուս:

ՄԱԳ.—Ես չեմ փախել...

ՍՕՆ.—Մագդային ես եմ բերել իմ տունը, ոչ թէ փախել է: Նա մեղաւոր չէ: Բան ունես, ինձ ասա:

ՁՈՒՄ.—Սպասիր... Ապա մի գնանք տուն... Ես քո հախիցը էնպէս գամ, որ...

ՍՕՆ.—Որդի, գնա գլխարկդ դիր արի: (Մագդան գնում է):

Տ Ե Ս Ի Լ Թ.

Ջումբուդ և Սօնա

ՍՕՆ.—Տնոր, մատաղ արա, արիւնը խմիր, բալբի սիրտդ հովանայ: Առաջ դու մարդ էիր, Ջումբուդ, հիմա գրուստ գազան ես դառել:

ՁՈՒՄ.—Քո խօսքը ինձ համար ոնց որ ճանճի բզզոց:

ՍՕՆ.—Ջումբուդ, իմ խօսքը քեզ համար ճանճի բզզոց է, հա՛. շատ լաւ, դու էդ չմոռանաս: Կնկադ պատճառով բոլոր բարեկամներդ աչքիցդ գցեցիր, դէ հիմա գնա ու կնկադ խէրը տես: Աստուած քեզ պատիժ է ուղարկել, Ջումբուդ, դու էլ կնիկ չունես...

ՁՈՒՄ.—(Իստան հայեացքով): Ի՞նչ ես ուզում ասել:

ՍՕՆ.—Էն եմ ուզում ասել, որ քո սիրուն կնիկը հիմա ուրիշ տէր է գտել իր համար: Գնա, ջանդ դուս գայ...

ՁՈՒՄ.—(Յարձակողական դիրքով): Քո լեզուն պապանձուի...

ՍՕՆ.—Ինձ չես հաւատում. գնա քո դրացի Ռուբէնից հարցրու. նա Վանոյի ծանօթն է:

ՁՈՒՄ.—Տես, դու իմ սիրտը կրակ գցեցիր, առանց էն էլ կրակվում էր... (Մտնում է Մագդան, որով ընդհատվում է Ջումբուդի սկսածը): Բայց էլ տեղը չէ... յետոյ, յետոյ... (Մագդային) Առաջ ընկի: (Գնում է):

ՍՕՆ.—(Նրա ետեւից): Գնա, Ջումբուդ, վա՛յ տուր գլխիդ, աչքիդ լուսը գո՛ւրս եկաւ:

Վ Ե Ր Ը Դ Ո Յ Ր

ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Առաջին գործողութեան տեսարանը, Հետեւալ օրը, Երեկոյ:

Տ Ե Ս Ի Լ Ա.

Ջումբուդ և Պետրոս

ՁՈՒՄ.—Պետրոս, ասա տեսեմ. անցեալներումը, երբ ես մի քանի օրով հեռացել էի քաղաքից, ովքեր էին մեզ մօտ գնում-գալիս:

ՊԵՏ.—Այո, շատերն էին գնում-գալիս, ես որի՞ն ասեմ:

ՁՈՒՄ.—Օրինակ, մէկի անունը տուր:

ՊԵՏ.—Խանութի ազգականները:

ՁՈՒՄ.—Յետոյ, էլ ով:

ՊԵՏ.—Մեր դրացիքը:

ՁՈՒՄ.—Յետոյ:

ՊԵՏ.—(Մտածում է): Հա, Մագդայի մօրաքոյրը:

ՁՈՒՄ.—Յետոյ, պաշարդ պրծաւ: Մի ջահել տղայ կար, նա չէր գալիս:

ՊԵՏ.—Ձեմ իմանում, աղա, որի՞ մասին ես հարցնում:

ՁՈՒՄ.—Էն, որ էստեղին խալ ունի:

ՊԵՏ.—Հասկացայ, Ջումբուդ աղա, Վանոյի մասին ես հարցնում:

ՁՈՒՄ.—Հա, Վանոն: Նա գալիս էր:

ՊԵՏ.—Գալիս էր, աղա:

ՁՈՒՄ.—Շո՛ւտ-շո՛ւտ:

ՊԵՏ.—Մի քանի անգամ տեսել եմ:

ՁՈՒՄ.—Իսկ խանութը շո՛ւտ-շո՛ւտ էր դուրս գալիս:

ՊԵՏ.—Ամեն օր:

ՁՈՒՄ.—Թատրոն գնում էր:

ՊԵՏ.—Գնում էր:

ՁՈՒՄ.—Մագդային հետը տանում էր:

ՊԵՏ.—Ոչ մի անգամ:

ՁՈՒՄ.—Թատրոնից մենակ էր գալիս թէ մարդու հետ:

ՊԵՏ.—Կին-արմատը, աղա, մնց կարող է կէս գիշերին մենակ գալ տուն:

ՋՈՒՄ.—Ուրեմն նրան հիվ էր բերում:

ՊԵՏ.—Մի քանի անգամ վանօն է բերել:

ՋՈՒՄ.—Լաւ, զնա բանիդ:

Տ Ե Ս Ի Լ Բ.

Ջուճուղ (մեմակ)

ՋՈՒՄ.—Ձէ, իմ կասկածը անտեղի չէր: Հարսանիքում իրար մօտից չէին հեռանում, իրար աչքով ուտում էին: Սօնայի ասածն էլ միտի պէս ցցուել է գլխումս ու դուրս չէ գալիս: Ամեն բան ես էսօր և եթ պիտի իմանամ: Հելէն, եթէ կասկածս ճշտուեց, վա՛յ քո օրին... (Պետրոսը նամակ է բերում): Ո՞վ բերեց:

ՊԵՏ.—Չճանաչեցի, աղա:

ՋՈՒՄ.—Գնա: (Սկսում է կարդալ նամակը): Վա, միայն երկու տող: «Պարոն Ջումշուդ, քո պաշտած կինը այս ժամին վանօյի հետ քէֆ է անում»: Օ՛, անառակ, անզգամ... Ես երկուսին էլ շանսատակ կանհամ... Բայց ոչ: Ռուբէնի հետ էլ պէտք է խօսել: Ձեմ կասկածում, որ սա նրա նամակն է: (Ջանգաճաբում է: Մտնում է Պետրոսը): Հարեան Ռուբէնին խնդրիր այստեղ: Ասա՛ շատ հարկաւոր գործ է, էս բօպէիս թող գայ: (Ծառան գնում է): Հեղուշ, ինչ էի կարծում քեզ և ի՜նչ դուրս եկար... Հերիք չէ՞ր, որ քո շալլ ծախսերով տունս քանդեցիր, հիմա էլ պատիւս ես գետնովը տալիս... Վա՛յ քեզ, Հեղուշ, վա՛յ քեզ: (Գալիս է Ռուբէնը):

Տ Ե Ս Ի Լ Գ.

Ջուճուղ և Ռուբէն

ՋՈՒՄ.—Բարով եկար, Ռուբէն: Նստի՛ր: Ես ուզում եմ մի քանի բաներ իմանալ քեզից: Դու ճանաչում ես վանօյին:

ՌՈՒԲ.—Նրան հիվ չի ճանաչում: Մենք բարեկամներ էինք, իսկ այժմ ես նրան չեմ բարևում: Փուշ մարդ դուրս եկաւ:

ՋՈՒՄ.—Հարեանս, ես քեզ խոստովանեցնում եմ քո խղճի առաջ: Ասա, ի՜նչ գիտես էդ փուշ փչացածի և իմ... իմ... անունը չեմ ուզում տալ...

ՌՈՒԲ.—Ես արդէն հասկացայ: Ահա ինչ կարող եմ ասել ձեզ հետաքրքրող հարցի մասին: Մի անգամ ես պատահամբ մտայ այդ ստահակի բնակարանը, ուր նստած էր մի գեղեցիկ կին, որ ինձ տեսնելով՝ շատ անյարմար դրութեան մէջ զգաց իրան: Նա շուտով գնաց. ես հարցրի վանօյից. «Ո՞վ է այդ կինը և ի՜նչ գործ ունի քո սենեակում»: Նրա պատասխանը այս

էր. «Դա իմ սիրականն է»: Մենք այն ժամանակ հարեաններ չէինք և տիկնոջը չէի ճանաչում:

ՋՈՒՄ.—(Ձեռք տալով): Շնորհակալ եմ, հարեան, որ էդպէս անկեղծ բոլորը ասացիր: Հիմա էլ մի ուրիշ հարցի պատասխանիր, և ես քեզ բաց կը թողնեմ: Ասա, էս նամակը դու չե՞ս գրել:

ՌՈՒԲ.—Իմ սեփական ձեռքով:

ՋՈՒՄ.—Շնորհակալ եմ, որ խոստովանեցիր: Հիմա ազատ ես: (Ռուբէնը գլուխ տալով գնում է: Ջումշուդը գրպանից հանում է ատրճանակը, նայում եւ կրկին դնում գրպանում):

ՋՈՒՄ.—Հիմա գնում եմ ոչոսի հոսից: (Գնում է: Քիչ յետոյ երեւում է Մագդա, դեմքը արտայայտում է զգուշութիւն, մի գուցէ մեկն ու մեկը նրա գաղտնիքն իմանայ: Ծոցից հանում է մի նամակ եւ սկսում է կարդալ դողդօջ մեռքերում բռնած: Յետոյ բուրբ ծալում է, դնում է ծոցը, գլուխը բռնելով քնկնում է բազկարոտի մէջ: Մի քանի վայրկեան տեսնում է այդ լուռ տեսարանը: Մտնում է Նիման ուրախ, բայց տեսնելով Մագդային վերին աստիճանի տխուր՝ ինքն էլ լրջանում է):

Տ Ե Ս Ի Լ Գ.

Մագդա, Նիմա և յետոյ Սօնա

ՆԻՆ.—Մագդա, մի բան պիտի խնդրեմ: Այս երեկոյ մեզ մօտ հաւաքուելու են մեր ընկերուհիները, մի քանի հոգի էլ Ռուբէնի ընկերներից: Շատ ուրախ ժամանակ պիտի անց կացնենք: Ռուբէնը կածէ ջութակ, Մանիան դաշնամուր կը նուագէ: Կը պարենք, կերպենք, յետոյ կը լինի թեթիւ ընթրիք: Մի խօսքով՝ հրաշալի երեկոյթ կունենանք: Մագդա, խնդրում եմ, դու էլ արի, անպատճառ դաս...

ՄԱԳ.—Նիմա ջան, ներքի՛ր ինձ. ես չեմ կարող գալ: Միբոս աջնալէս տխուր է... չեմ կարող մասնակցել ձեր ուրախութեան, ուրախանալու ընդունակութիւնս կորցրել եմ... Միթէ կուզենայիր, որ ես իմ ներկայութեամբ տխրութիւն մտցնեմ ձեր ուրախ շրջանում...

ՆԻՆ.—Մագդա, չգիտեմ ինչ է պատահել, վերջին ժամանակները այնպիսի փոփոխութիւն եմ նկատում քո մէջ... կարծես ձանձրացել ես աշխարհից և կեանքից:

ՄԱԳ.—Այո, Նիմա, ձանձրացել և յոգնել իմ կեանքից. այժմ ես միայն հանգիստ եմ ցանկանում...

ՆԻՆ.—Ա՛խ, Մագդա, դու ինձ էլ տխրեցրիր:

ՄԱԳ.—Ներքի, հոգեակս, արի գրկուենք և համբուրուենք: (Ձերմ համբոյր): Այժմ գնա, Նիմա, և ինձ թող իմ վշտերի հետ:

ՆԻՆ.—Մագդա, եկայ ուրախ, գնում եմ տխուր: (Նիման գնում է: Մագդան մենակ մնալով՝ նայում է այս ու այն կողմ, ականջ է դնում, եւ երբ համոզվում է, որ ոչ ոք չկայ, ծոցից հանում է նամակը, արագ աչքի անց կացնում եւ ծալելով դնում է սեղանի վրայ: Յետոյ բաժակը լցնում է ջրով, բոյն է խառնում մեջը եւ պատրաստվում է խմել):

ՄԱԳ.—Մամա ջան, առանց բեզ իմ կեանքս անտանելի է, դրա համար վերջ եմ տալիս իմ կեանքին, որ շուտ դամ քեզ մօտ: (Մօտենում է իր սենեակի դռան, կանգ է առնում, աչքերը դարձնում է դէպի վեր եւ «Աստուած իմ, ներիր ինձ» ասելով խմում է թոյնը եւ դրան շեմից անցնում: Շուտով լսվում է Մագդայի ճիչը եւ նրա մարմնի ընկնելը յատակի վրայ: Մտնում է մօրաքոյրը, որ եկել էր Մագդային տեսնելու: Լսելով տանջանքի ցնցումներ եւ խուլ տնքոց, Սօնան շտապում է դէպի այն կողմը, բայց անմիջապէս յետ է դառնում սարսափած եւ ողբազին աղաղակներով):

ՍՕՆ.—Հոգն իմ գլխին... թոյն է խմել... էս ի՞նչ օրի հասանք... Պետրոս, Պետրոս... (Ջանգաճարում է: Ծառան գալիս է): Շուտ, բժիշկ հասցրո՛ւ, Մագդան թոյն է խմել... հարկաններին էլ ասա՛ գան... (Ծառան շտապ հեռանում է): Վա՛յ, Մագդա ջան, էս ի՞նչ բերի մեր գլուխը: Ո՞ր սատանան դըրդեց քեզ էս չար գործին... Հիմա ի՞նչ անեմ ես, ի՞նչ հողը տամ գլխիս... երեխան էստեղ մորթած հաւի պէս թրփրտում է, ես անգոր եմ մի բան անելու... Աստուած, յոյսս քեզ վրայ է. դու խնայիր, դու փրկիր է՛ն քանբախտին... (Նկատելով սեղանի վրայ Մագդայի նամակը) Նամակ է թողել... (Համբուրում է) էս քո կենդանի ձեռքովն ես գրել, ազիզ ջան, հիմա միթէ էդ ձեռքը պիտի սառչի ու չորանայ... (Շտապ գալիս է Ռուբենը անհանգիստ):

Տ Ե Ս Ի Լ Ե

Սօնա, Ռուբեն, յետոյ բժիշկ եւ Զումբուդ

ՌՈՒԲ.—Ի՞նչ է պատահել:

ՍՕՆ.—Թոյն է խմել...

ՌՈՒԲ.—Օ՛, թշուառական...

ՍՕՆ.—Բժիշկն էլ ուշացաւ... էս ի՞նչ պիտի անեմ:

ՌՈՒԲ.—Ես ինքս կը գնամ, իսկոյն կը բերեմ:

ՍՕՆ.—Ա՛ռ (Դնում է նրա մեռելի Մագդայի նամակը): Յետոյ կը կարդաս:

ՌՈՒԲ.—(Նամակը գրպանը դնելով մի երկու քայլ է անում դեպի դռանը, նրա առաջ դուրս է գալիս բժիշկը):

ՍՕՆ.—(Ձեռքերը գալարելով) Բժիշկ, փրկիր նրան, փրկիր... (Նա գնում է, բժիշկը նրա ետեւից: Ռուբենը նոյնպէս գնում է: Բիշ յետոյ յետ է գալիս սաստիկ յուզուած):

ՌՈՒԲ.—Օ՛, էս չեմ կարող տանել այն ցնցումները... Ի՞նչ սքանչելի արարած պիտի մարի եւ անհետանայ... (Մըտնում է Զումբուդը):

ԶՈՒՄ.—Ի՞նչ է իր սպասում:

ՌՈՒԲ.—Ո՛չ: Գնա՛ս այնտեղ, քո աղջկը թոյն է խմել եւ մեռնում է:

ԶՈՒՄ.—(Յուսահատ հառաչելով) Օ, Մագդա, Մագդա (գնում է):

ՌՈՒԲ.—Այս բոլորը կարելի էր գուշակել: (Բաց է անում նամակը եւ աչքի անց կացնում): Կարապի վերջին երգը: Քանի կարդաս, բարը կը ճաքի: Եթէ Զումբուդի խիղճը դեռ չէ զարթնել, էս սրտնով կը զարթեցնեմ: (Գալիս է բժիշկը): Յոյս չկա՞յ, բժիշկ:

ԲԺԻՇԿ.—Վերջացաւ:

ՌՈՒԲ.—Գիտէ՞ք, բժիշկ, թէ ի՞նչ պիտի հոյակապ կեանք խորտակուի:

ԲԺԻՇԿ.—Լսել եմ եւ շատ ցաւում եմ: (Գնում է):

(Մտնում է Զումբուդը բոլորովին ընկճուած, նրա ետեւից Սօնան):

ԶՈՒՄ.—Տունս գլխիս փոշի եկաւ, քանդուեց... (Ընկնում է բազկաթոռի մէջ, զլուխը խոնարհում եւ քաշկիմակով ծածկում է աչքերը):

ՍՕՆ.—(Աչքերը սրբելով): Որդիս, կարդա՛ Մագդայի գրածը:

ՌՈՒԲ.—Այս բօպէիս (Հանում է գրպանից): Նամակը ուղղում է ձեզ, դարձն Զումբուդ թոյլ կը տաք կարդալ:

ԶՈՒՄ.—(Ձեռքով համաձայնութեան նշան է անում):

ՌՈՒԲ.—(Կարդում է). «Սիրելի հայր, էս այլ ես կարողութիւն չունեմ տանելու այն բոլոր նախատիները, արհամարհանքը, ծեծը եւ այն բոլոր տանջանքները, որ դու եւ քո կինը...»:

ԶՈՒՄ.—Ես կի՛ն չունեմ, Մագդա ջան...

ՌՈՒԲ.—(Շարունակում է). «Այն բոլոր տանջանքները, որ դու եւ քո կինը պատճառում էիք ինձ...»:

ՍՕՆ.—Նրա պէս կնկայ արգանդը չորանայ...

ԶՈՒՄ.—Կեանքը սեանայ...

ՌՈՒԲ.—«Ես քեզ ներում եմ, հայր, որովհետեւ դու միայն մի խաղալիք էիր քո չար ամուսնու ձեռքին...»:

ԶՈՒՄ.—Հա՛, բալէս, խաղալիք էի... Ես նրա շունն էի... նրա քոսոտ շունը...

ՌՈՒԲ.—«Դու էլ ինձ ներեր, հայր, եթէ ես քեզ վշտաց-
րել եմ, սիրտդ նեղացրել...»:

ՋՈՒՄ.—(Դանդաղ քայլերով մօտենում է դրան, հայեացքը
նկատում Մագդալի սառած մարմնի վրայ եւ ասում փղնկով)。
Դու ես ինձանից ներողութիւն խնդրում, Մագդա ջան... Դու
ինձ ի՞նչ ես արել. այ անմեղ հրեշտակ, այ Աստուծոյ դառ... Ինչ
որ արել եմ, ես եմ արել, ես... Ես էս չորացած ձեռքովս քանի
անգամ եմ մազերիցդ փունջ փունջ պոկել, պատին տուել, ե-
րեսիդ խփել... Կոտորուի՞ էս ձեռքս... Էս օձի լեզուովս քանի
անգամ եմ ես քեզ խայթել, ուշուկն տուել, անէծք տուել, հայ-
հոյել... այ լալկուի էս իմ լեզուն, չորանայ...

ՌՈՒԲ.—«Ես գնում եմ մօրս մօտ: Մօրս շատ եմ կարօ-
տել: Մնաս բարեաւ, հայր իմ, մնաս բարեաւ յաւիտեան...»:

ՋՈՒՄ.—Մնաս բարով, իմ թառախ, մնաս բարով... գնա,
տար հօրդ համբաւը մօրդ հասցրու... Ասա. «Հէրս խելքը տա-
նուլ էր տուել, ցնորուել էր...»: Ասա. «Խղձմտանքը ծախել էր
մի լիբր կնիկայ, որը աշխարքի առաջ նրան խայտառակեց»: Ա-
սա. «Հէրս ինձ ուսումից զրկեց, շորից զրկեց, ուրախութիւնից
զրկեց եւ օրհնելու տեղ՝ անիծելով ճամբայ դրեց»: Ասա. «Հօրս
ձեռին կեանքս մաշուեց, օրս սեպացաւ, ծաղիկ կեանքս թառա-
մեց...»: Ասա. «Հէրս մեղքերի տակ թաղուել է, էլ չի վեր
կենայ եւ սպասում է վերջին, ահեղ դատաստանին»: Ջոնադուդ,
մեռնի՛ էս գլուխդ, մեռնի՛...

ՍՕՆ.—Դուրսդ ծեծելով նա չի լաւանայ: Դրախտի թըն-
չունը թռաւ գնաց եւ էլ ետ չի գալ... Տունդ քանդուեց, Ջում-
շուդ... Ա՛խ, Մագդա ջան, քո մահն ի՞նձ գար երանի... (Դնում
է Մագդալի սենեակը):

ՋՈՒՄ.—Էլ այսուհետ իմ կեանքը զրոշ չարժէ: Հիմա լաւ
ժամանակն է անպէտք կեանքիս վերջ տալու: (Ատրճանակը հա-
նում է, նայում): Բայց մեռնեմ՝ վրէժը սրտիւմս: Ոչ: Պարտա-
կանութիւնս պիտի կատարեմ, յետոյ մեռնեմ: (Գալիս է Հեղինէն:
Ջոնադուդը գնում է, նրա մեռնիցը բռնում, տանում է դրան մօտ
եւ ցոյց է տալիս անշնչացած Մագդալի վրայ): Նայի՛ր, քո զոհն
է սա...

ՀԵՂ.—Դու ես սպանել, գնդան:

ՋՈՒՄ.—Անգամ կին... իմ օջախը դու հանգցրիր... մե-
ռի՛ր: (Ատրճանակը պարպում է. Հեղինէն ընկնում է):

Վ Ե Ր Ը Գ Ո Յ Ր

ՀՀ Ազգային գրադարան



NL0350396

Լոյս են տեսել «ԱՐՕՐԻ» հրատարակութեամբ
հետեւեալ գրքերը

1) Մի հնչիւնին մի գիր, Ստ. Մալխասեանցի, գինը	20 կ.
2) Հայաստանն երբեմն եւ այժմ, Լեւոն Հաուպտի, Թարգմ. Իս. Յարութիւնեանի, գինը	20 կ.
3) Առացուածներ Մահովդի, ընտրուած Լ. Ն. Տօլս- տօյի ձեռքով, Թարգմ. Լ. Դանիէլեանի, գինը	5 կ.
4) Կօնճուցիոս, կազմեց Պ. Ա. Բուլանժէ, խմբ. Լ. Ն. Տօլստօյի, Թարգմ. Սուրբաթեանի, գինը	7 կ.
5) Ճորճերի ազատագրութեան լիսնամակը, գինը.	15 կ.
6) Խոստովանութիւնը, Լ. Ն. Տօլստօյի, Թարգմանութ. Սուրբաթեանի, գինը.	30 կ.
7) Թննսուն երեքը, մեծ վէպ Վիկտօր Հիւգօյի, Թարգմ. Ա. Սաֆարեանի, գինը.	1 ր. 50 կ.
8) Դեանուածներ, պիէս 3 գործ., Ալ. Աբէլեանի, գ.	60 կ.
9 Սաւառնող ոգին, վէպ Յովակիմ Սօլովիանի, գ.	40 կ.
10) Ուսանողներ, պատկեր 3 արարուածով, Գ. Բա- շինջաղեանի, գ.	50 կ.
11) Փարսւոնն ու հանձարը, Ա. Մ. Եգեկեանի, գինը	15 կ.

Սոյն գրքերը ծախվում են «ԱՐՕՐԻ» խմբագ-
րատանը:

ԳԻՆՆ Է 40 ԿՈՊ.